0 2000

# ՔԱՀԱՆԱՅ

Համբակադրոյն , առ 'ի յօգուտ մե ուսանողաց :

ԿԱՄ

Համառօտ կերպ . նկատումն . և կրթ թն առ 'ի զօրացուցանել զչո գեղարս :

Ի խրատ Նորավարժ Քահանայից :

Արարեալ 'ի Հայր Յովսէփայ վանական կրօնաւորէ :

Իսկ Թարգմանեալ 'ի լոյս ածեալ 'ի Արտ նաս Վարդապետէ Կոստանդնուպօլսե ցոյն փայէ Սէմնեան :

Ծախիւք և արդեամբք ոմն Մկնուա եարոյ և Բարեպաշտ ջերմեռանդէ 'ի փառս Այ :

'Ի ՎԵՆԵՏԻԿ . Յամի Տն 1748 :
'Ի Տպարանի Անտոնի Պօռթօլի .
Հրամանաւ մեծաւորաց :

819

262.1

171-682

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## Բան առ բարեմիտ ընթերցօղս:

Սու՛քղի զօրութեան խորհրդոյ ապաշխարութեն
և զէութենական մասանց նորին. և
զպէս պէս դիպուածոց՝ ըստ վրդ̃ք ըստ
կերպիւ խօսքն և հաստատեն: Բայց սա
կայն սրբազան վրդ̃ս այս՝ հեղինակն այս
միկ գրքոյս. զխոստովանահարց և զկառա
վարչաց Քահանայից բուռն հարկանէ. և
զմծայլին պաշտօնն նց̃. որ առ փրկութ
հոգւոցն՝ արեամբն Յսի գնելոց. և զպար
տսն նց̃ լուիլու յայտնաբար ցուցանէ. ո
րոց 'ի պկսիլն՝ ըստ անձինք. որք փրկութեն
փափաքին հասանիլ՝ ոչ միայն ոչ հասա
նին. այլ դահավիժեալ գլորին՝ սակս
ադխութեն նց̃. կմ̃ անհոգութեն: Վ̃յ յորդո
րէ զըն Օգոստինոս և ասէ 'ի գիրս բարխա
բարբաց: Թէ ծանրանայ էթեւչէն ընդ ... ական
հետանդէն. և հայրն ընդ անդգամ որդւոյն: Միքն
կալէ. և մեան գանէ: այլ առաջայն եպիսկոպան
չէարն ... : Եթէ ...անէ անհոգ լեցին և հօրն
չէլ թոյլ ... նոյն հեղոյեն՝ ... անգթութե է.
եւ ... աստուածէլ ... 'ի ... եղեալ
յեղեօրէ. ... 'ի ... չէ՛ 'ի ... :
Ու է՛ անգութ և ոչ անողորմն խոստովա
նահայրն այն. որ հոգայ զհոգին խոստովա
նորդւոյն՝ զի ուղղեսցի: Իսկ յայնժամ է՛
անգ

անգթութն և անողորմութն · որ լալէ · և լուէ
կամ զանցառնէ · կա՛մ տգիտութե աղագաւ ան
հոգ լինի · իսկ նա անդէն դատապարտի ։
Քզի որ զհոգւոյն փրկութէ բուռն հարկա
նեալ պարտ և պատշաճ իսկ է՝ զի 'ի յուղղութն
զնա ածցէ։ իսկ եթէ առաջին աշխատութբն
ոչ ուղղեսցի · ոչ պարտի 'ի բաց լքել ։ Քզի
խոհեմ բժիշկն տեսանելով՝ զի առաջին դե
ղովն և դարմանութն ոչ ապաքինի հիւանդն՝
ոչ վն այսորիկ զանց առնէ զնմէ · այլ մինչև
յառաւօտու և յերեկոյի այց առնելով նմա
նորանոր պէսպէս դեղովք՝ 'ի դուն գործէ առ
'ի լաւացուցանել զնա ։ Համբերութեամբ փայ
տահատն՝ որ կամի հատանել զծառ մի
չորացեալ և անպտուղ · ոչ առ առաջին հարկանե
լան տապարի՝ յարժամ տեսանէ · զի ոչ ան
կանի յերկիր՝ թողու և զանցառնէ զայնու ·
այլ մինչև կործանէ · հարկանէ տապարաւ · իսկ
եթէ ոչ դիւրաբար կարիցէ հատանել՝ ան
դէն սղոցէ · և այնք աշխատի մինչև 'ի յերկիր
արկանէ։ որպ վկայէ տէրն Յոհան ոսկեբերան։
Զնոյնս պարտի առնել բարի խոստովանա
հայրն և հոգացողն հոգւոց։ Որպէս՝ ոմն բժիշ
կն՝ որ տեսանէ և ճանաչէ զանբժշկելի խո
թութիւն հիւանդին · ոչ վաղ հրաժարի · այլ
մինչև աշխատի եղուն գործէ · հնարս
խնդրէ առ 'ի բժշկել զնա · զի մի՛ ասասցի ·
թէ

Թէ մեռաւ ասկս անհոգութեն և անզգուշու-
թեն բժշկին։ Նոյնպէս և բարի խոստովանահայրն՝
չէ՛ պարտ ամենեւին հրաժարել. և ձանձրա-
նալ. կամ նեղիլ։ մինչև զհոգին հանէր որդ-
ւոյն ոչ ջանասցէ հասուցանել ՚ի նպատակ
իւր որէ՛ յաւիտենական երանութեան։ Այլ արդ՝
ոպ՟ ասէ մեծն բասիլիոս. Թէ խոստովանահայրն
պարտի գոլ իմաստուն, կրթեալ ՚ի գիրս
ածայինս. և ՚ի տեսական և ՚ի բարոյական
ածաբանական գիտութիւնս. և ևս պճնեալ
երփներփն գունով գործոց առաքինութե. առ
՚ի կարող լինել հաղորդել ՚ի յայլս՝ զայն.
զոր ունի։ իսկ եթէ ոմն հկուկս պատասխանէ
բանիցն մեծին բասիլիոսի։ Թէ այսօր ոչ
գտանին կամ փոքր այնպիսի վրդպտք հո-
գւոց. պատասխանէ վրդպն. Թէ պարտ իսկ
է՛ ընտրել զազնիւն ՚ի նցանէ. որք գտանին
՚ի վր երկրի։ որք զարդրել իցեն գիտութբ և
զնդն առաքինութբ. քզի միշն առնելով
զայն՝ զոր պարտն է՛. ած կացուցանէ ՚ի մի
ջի նց զհովիւն մը. որ լինի վրդպ երկնքչիւ-
րոց։ առ ՚ի ուղղել ՚ի շաւիղն յաւիտենական կե-
նաց։ Եւ արդ՝ ո՞վ Քահանայդ նորընծայ.
զգոյշ լեր և խորհեաց. զի մի՛ կորնեսցի ՚ի
քեզ աւրինակն առակին Յսի. որ ասէ.
Թէ կոյր կուրի առաջնորդէ՝ երկոքեանն միա-
սին. և ՚ի խորխորատն անկանին։ Այն՝ որ

առաջ

առաջնորդէ կայր է՛ . և այն՝ որ առաջնոր
դի՝ հանգուանայ՛ կայր ։ Արդ՝ ՚ի մէջ եր
կուց այսոցիկ կուրից՝ ո՛րն թուի քեզ առաւել
կուրագոյն . նա . որ առաջնորդէ . կամ նա՝
որ առաջնորդի ։ Երեւ կուրագոյն է՛ նա .
որ առաջնորդէ . քանզի կայրն՝ որ զառաջնոր
դուն յայլոց խնդրէ . գիտէ՝ ճանաչէ՝ զի
կայր է՛ ։ Բայց նա . որ այլոցն կամի առա
ջնորդուն առնել . հեռի է՛ ՚ի գիտելոյ և ՚ի
ճանաչելոյ՝ թէ կայր է՛ . որ կարծէ դրաւել
զայս ՚ի յլինքն . Առաջինն է՛ կայր միանգամ ։
իսկ երկրորդն է՛ երկկիցս կայր ։ միանգամ .
զի է՛ ։ և միւսանգամ . քանզի ոչ ճանաչէ ։
վա՜յ մի՛ լինիր յանձնապաստան ՚ի քեզ ո՛վ
Քահանայդ բարեկրօն . թէ դու քոյովդ
զօրութ՟ . կարասցես օգնել եղբօր քում
խօլթացելոյ . մինչև չունիցիս զայս բացեալս
և սրատեսս . որովք եղբօր քում կարասցես
օգնել ։ Քանզի ոմանք կարծելով օգնել .
անդէն ՚ի խորխորատն գեհենոյն սայթա
քեալ գլորեցան ։ վա՜յ սակս այսմիկ զգու
շուն պարտ և պատշաճ համարեցաք իբր
ակն մի՛ գեղեցիկ և գործիք ամենահզօր՝
զփոքրիկ գիրքս զայս թրգմանութ՟ և տպա
գրութ՟ ՚ի լոյս ածել ։ ՚ի յորնկատեալ՝ իբր
՚ի հայելւոջ բարիխոստմնհրք զբնծս արա
տոյ իւրեանց խոստովանորդաց ծանիցեն ։
և

# ԽՐԱՏ ԱՌԱՋԻՆ

Թէ ո՛րպիսի տրամադրութիւն հարկ
իցէ դոլ ՚ի քահանայն . որ
կամի օգնել հիւանդին :

ՀՐԵՇՏԱԿՆ՝
զոր ետես Յովհաննէս
՚ի յայտնութեան . I. գլխ ,
նման որդւոյ մարդոյ , ունէր
՚ի մէջ շրթանց իւրոց ըղ
սուրն . և ՚ի ձեռին զաս
տեղսն : Եւ ունէր յաջ իւր աստեղս . և ՚ի
բերանոյ նր , սուր երկսայրի որպէս ելանէր :
Եթէ պատմութիւն այս ո՛չ իցէր ՚ի հաւա
տոյ՝ թուէր սղալութիւն ՟ այլայլութեան Աւե
տարանչին : Քանզի մանաւանդ պարտ
և պատշաճ էր աստեղացն դոլ ՚ի բե



րանն .

րանն . իսկ 'ի յաջն , սուրն : Այլ սա
կայն տեսութին՝ ածային գոլով, այլազգ-
է՝ ածային խրատն, որ 'ի յայնպիսի խոր
հուրդս՝ խմացեալ ծանուցանի նա , որ
արժանապատուութեամբն քահանայու
թեան,է՝ իբր նման Որդւոյն Աստուծոյ :
Արդ՝ կամիմ ո՛վ նորընծայ Քահանայ.
զի դու քաջութը սրտի կրթեսցիս 'ի
պաշտօն մի գթութե . որ կ՛ օգնել հո
գեվարաց : բայց յիշեսջիր ունիլ զաս
տեղս 'ի ձեռին . 'ի սերտ սրտէ ջանալով .
թէ ած գործք քո՝ լիցին գործք երկ
նային՝ և ածային : և զի պայծառագեղ
ճաճանչիւք ճառագայթից՝ փայլեսցին
յաչս մարդկան : զի 'ի ձեզ կայանայ այն,
թէ դուք էք լոյս աշխարհի : Կացութի քո
լիցի համգոյն դերազանցագոյն աստիճա
նացդ : Գործեսջի՛ր միայն դիտաւորու
թբ առ 'ի հաճոյանալ Այ . և վա
ռեսջի՛ր նախանձու հոգւոյն : Ե՞ վկայեմ
քեզ՝ զի առանց այլ և այլ իրի դու ու
նեսցիս զսուրն 'ի շրթունս քո . և թա
փանձիցին բանք քո՝ ո՛չ միայն 'ի սիրտս
հիւանդաց . ո՛րքան քարացեալն ևս ի
ցէ : այլ նաև ո՛ւմ զսուրն զայն՝ զոր ետես
Յօհաննէս յամ կողմանէ սրեալ . 'ի նոյն
համօզման քոյ՝ բանն քո վերաւորեսցէ
նաև

նաև զդևս, որք գան 'ի մահիճս հիւանդին.
առ 'ի առնուլ 'ի ձեռին զյաղթութի̃։ Ի՛սկ
եթէ դու լիցես հիւանդագոյն 'ի հոգին՝
քան թէ հիւանդն 'ի մարմնի. զի՞արդ օգնու-
թի̃ կարիցես առնել։ Ճշմարտապէս դևն
սկսանիցի ծաղր առնել զքեզ. և զամօթի
հարեալ՝ դէմ յանդիման խայտառակել.
ԲԺԻՇԿ ԲԺՇԿԵԱ՛ ԶԱՆՁՆ ՔՈ. Եւ՛ առաւելաբար
խայտառակ լիցիս քան զայն՝ որ ջանա
լով ազատել զոմն պէս պէս անուշադոյն
ըմպելեօք 'ի հաղէ, նա՛ շնչասպառ պայ
թուցեալ հերձիւր։ Եւ՛ զի՞արդ այլ ևս
խնդրես. զի հոգևորին շարժեսցի առ
'ի առնել զներգործութիս զղջման, կամ
սիրոյ դէպ 'ի յա̃ծ՝ 'ի յա̃մ սրտէ. յորժամ
ճանաչէ, թէ որ քաջալերէ զինքն, նա՛
ինքն է՛ տխալն դաղջութի̃ ; և անբարե-
բաստութի̃։ Սիրտն խօսի ը̃ այլոյ սրտի։
մի՛ հաւատար յաւիտեան տպաւորել 'ի
յայլս զայն՝ զոր դու ո՛չ ունիս 'ի քոյդ։
Բանքն են իբր կենդանի պատկեր ներ
քնոյն, և սակայն այնպէս է՛ պատկերն.
ա̃պ է՛ գաղափարն. ՍԻՐՏՆ ՆՉ ՓՈՅԷ 'Ի
ՆՄԱՆՈՒԹԻՆ ՆԿԱՐԻ։ Եւ յաւիտեան բան քո
ո՛չ լիցի գործունեայ՝ և ջերմացուցիչ.
յորժամ յառաջ գայ յայնպիսի գաղջ
սրտէ. և ցրտացելոյ։ Կամիմ, զի բանք

քո իցեն ջերմն · քաղցր · և շարժողք ոգւոյ : Բայց զի՞նչ օգնեսցէ : Սակաւ օգնէ սուրն հատու · յորժամ 'ի գծանի 'ի յանզօր և 'ի տկար բազկէ : Ուստի դուն գործեա՛ , նախ քաջացուցանել դու զքեզ անմեղութե՛ վարուց 'ի ահաբեկումն դիւի · և առ 'ի ընկալնուլ յՆյ · զի հիւանդն առցէ զյաղթութիւն :

## ԳԼՈՒԽ · ԵՐԿՐՈՐԴ :

### Յաղագս անզանազանութեն · զոր պարտի ունիլ քահանայն դէպ 'ի հիւանդն :

Ամենայն քահանայ՝ դոլով ընտրեալ յՆյ · առ 'ի սրբացուցանել զհոգիս մ՜ բանիւն Աւետարանին · Ես զձեզ ընտրեցի · զի դուք երթայցէք , եւ պտուղ բեր իցէք · եւ պտուղն ձեր մնայցէ · պարտ է՝ զօրանալ 'ի յայնպիսի գործս ածային : ո՛չ հայելով 'ի թէութիւն հիւանդաց , այլ 'ի յազնուութիւն հոգւոց նց : ոչ յաղագս մարդկան ծառայեալք · Եւ էր մարդոյ

հա

հաճոյացեալք ։ Մի՛ զանազանեսցես ըզ-
խուղս պիտուեալս • կամ զպալատս • և
մի՛ սնեռեսցես զաչս քո 'ի փարթամս •
քան թէ 'ի տնանկս ։ Զի նախանձն հօ-
դւոց՝ է որդի օրինաւոր սիրոյ ։ և զի
զնուակն մի՛ համարեսցի որդի շնուն •
պարտ է՛ գոլ նման պատկերի մօրն • զի
ո՛չ գործէ նենգաւոր • ոչ խնդրէ ; որ իւրսն
էն ։ Ուստի նախանձն քոյ լիցէ պտուղ
առաքինութեց • լիցէ անզանազան ը̅ ամե-
նեսեան ոպ̅ արեգակն , որ առանց
խտրութե՛ ' ճառագայթիւքն իւրովք պայ-
ծառացուցանէ զգագաթս լերանց • և
զողմալից խորութիւս ձորոց ։ ա̅ծ փառ-
դաշտերն նաձեւորէ 'ի ներքոյ • Գեղեց
կութեն և փառքն հոգւոյն , ո՛չ տեսա-
նի արտաքուստ ։ Վ̅ս զի մարմինն՝ ոպ̅
որմն կազմեալ 'ի տղմոյ՝ արգելու զճա-
ռագայթս նր̅ ։ Վ̅ս որոյ անմեղութե̅ հա-
ւատոյ պարտ իսկ է՝ քեզ հայիլ 'ի ներքս
մարմնոյն ։ և տեսցես • թէ չէ՛ սակաւ
գեղեցիկ հոգին աղքատին • ք̅ հարստին ։
ք̅ զի երկաքանչիւրն է՛ դնեալ և զար-
դարեալ Արեամբն Յսի ։ Եւ գինն՝
որով գնեաց Յս̅ զմինն • նոյնով հան-
գունակս գնեաց զմիւսն ։ Մինչ պահ-
պանէ զպատուականութի՛ իւր մարդ արիւն•

կմ՝ եթէ կապեալ իցէ ը՟ ոսկւոյ. կամ է՟ արծըծի. կամ եթէ իցէ հոգին ծածկեալ 'ի մարմնի. կացուցեալ 'ի ներքոյ վարագուրի. կամ եղեալ 'ի մէջ խոտեղինի. բնաւ իսկ ո՛չ կորուսանէ զգլխն իւր: Միթէ՞ բարկացան հրեշտակքն առ 'ի առնուլ զհոգին ղազարու. զի էր աղքատ և վիրաւորեալ: Կամ միթէ՞ զզուեցան առ 'ի տանիլ զնա՛ 'ի մէջ թևոց առ 'ի հանգուցանել 'ի գոգն Աբրահամու: դու ո՛չ կարես ասել ինձ, թէ ո՛չ: Այլ մանաւանդ՝ ուր միոյն միայն յայնց եբանելի հոգւոց. բաւականանայր առ 'ի անդրադարձուցանել զաղքատն Ղազար, իսկ դասքն իշխանեն. ընծայելով իւրաքանչիւրքն մերձենալ 'ի նա՛. և անդրադարձուցանել. և լինել մասնակից ծանրութեան, որոց յոյժ թեթև էր. որպ վկայէ սրբն Յօհան Ոսկեբերան: Բաւականանայր առ 'ի պահել զաղջիկն՝ հրեշտակ մի. այլ մեծ այնորիկ բաւականութեան գան. զի տեառն ուրախութեան արացէն: Որպէս անուանեալ ուրախացուցանէր 'ի հրեշտակաց զայնչափ եղեան բառնալ. յօժարաբար այնպիսի բեռամբք ծանրանայ: Այդ՝ լեցի 'ի քեզ անշիրժ ինչ անզանազանութե. խորհելով զայն, զոր գրէ սրբն Դիոնեսիոս արիսպագացին. եթէ Ասպայնոցն՝ սծայէն է՛ համաբնութեանս 'ի

գործս

գործակից ընդ այ 'ի փրկութեան հոգւոյ : Զի եթէ պատահէր քեզ ընտրողուն առ 'ի օգնել · կամ փարթամի միոյ · կամ աղքատի · զո՞րն 'ի նոցանէ ընտրէիր արդեօք : փրկիչն մեր` զոր աղաչէին, ոչ կամեցաւ մտանել 'ի պալատն թագաւորազնին, առ 'ի բժշկել զորդի նորին · որ էր հոգեվար : գնաց Բէթղէհ ոչ այնչափ պաշտեալ 'ի մտանել 'ի տունն հարիւրապետին, առ 'ի բժշկել զանդամալոյծ ծառայ նորին : զի յամօթ արարեալ նախատիցէ զմերն ամբարտաւանութն · զի 'ի մարդն, ասէ սրն գրիգոր` ո՛չ բնութիւն · այլ պատիւն եւ փառաւորութիւն պատուի : Նման այնմիկ յիմարի, որ առաւելաբար վայելէ հայիլ 'ի կեղեւս խնձորոյ · քան ճաշակել զուղեղն : Որքան առաւել նախանձն քո մերկասցի 'ի մարդկային ամօթխածութէ · այնքան առաւել լիցի 'ի աստիճանի` պատարագն առ ած : Նա՛ · որ սակաւ խորհի զերկրէ · առաւել բուրէ 'ի յարքայութե :

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ։

## Զինչ պարտի առնել քահանային յորժամ ժամանէ 'ի տունն հիւանդին։

Ի մտանելն քոյ 'ի տունն հիւանդին · և 'ի մերձենալ 'ի մահիճս նր · զինչ առնելոց ես։ Կամէի · զի ընդ քեզ մտցեն օրհնութիւնքն երկնից ։ որպէս իջին 'ի վր տանն ղաքարու 'ի մտանելն յակոբայ ։ Մի՛ ցուցաներ զքեզ ցասաղելեալ յերեսս քո։ որպէս դեսպան մահու ։ Այլ ամենևին քաղցրաբարոյ · և բարեբարոյ՝ որպէս հրեշտակ արքայութե ։ ող ջունեա՛ զնա՛ ասելով · Յ⁼ իջէ ընդ ժէղ ։ և սրսկելով ջերմեռանդութբ 'ի մահիճն զօրհնեալ ջուրն՝ ասասցես զսաղմոսն ։ ցօղէ՛ յե՛ Մղփչա · Լո՛բ Եղէց · Լ այլն · Ուստի մեծաւ քաղցրութբ ցուցանելով դու զքեզ ցաւակից դոլ մեծապս զհիւանդութէ նր · ջանա՛ մխիթարել զնա՛ · և քաջացուցանել զնա առ 'ի կրել զայն հիւ

հիւանդութեն յօժարութբ սրտի · որպէս առաքեալ յմյ, եբր դեղ հոգւոյն: Բայց հոգասցես հանդերձ յառաջադրութբ · ցուցանելով նմա · զի ձեռն ամենակալի է՛, որ հայրաբար հարկանէ զնա սակս մեծի բարւոյ իւրոյ : և ո՛չ նկատեսցէ 'ի ձախորդութիւն՝ որ մեզ պատահի 'ի յայս միկ աշխարհի, եթէ ոչ իցէ 'ի յաւիտենից նկարագրեալ և սահմանեալ 'ի դիրս աստուածային նախատեսութեն : զի ոչ անկանի 'ի վերայ մեր ձախորդութի · վիշտ · և հիւանդութի · որ ո՛չ գայցէ 'ի ձեռանէ աստուծոյ : [illegible] : Եւ՛ ծանիր հաւաստապէս · զի զայնպիսի առողջութին · զոր յայտնես հիւանդին՝ ընդ ա̃ծային շնորհացն՝ տայ նմա զբաւական ընդունակութի · որով ծառայէ մեծաւ բարեխառնութբ հիւանդութե իւրոյ : Վասն զի որպիսի ոք է՛ նա, որ ոչ հաճի առ 'ի կրել յօժարութբ սրտի զա̃մ պատիժ, յորժամ գիտէ հաւաստեաւ, թէ վիշտն իւր գայ 'ի ամենագըթած Հօրէն, որ ոչ զայլ ինչ խնդրէ, եթէ ոչ զբարին նր · և զյաւիտենական օգուտն: Զի եթէ հիւանդն յօժար կամօք թողու հատանիլ անդամոյ միոյ 'ի մարմնոյն · և թոյլ տայ ծայրատուր հրա

ցեալ

ցեալ երկաթեաւ ծակել մարմնոյն · ա-
մենեքին հպատակելով կամաց բժշկին ·
քանզի գիտէ · զի այս չարչարանքս ոչ
վասն այլոյ իրի վաղճանի է , եթէ ոչ
վ̅ն առողջութե̅ն · և մարմնաւոր բժշկութե̅ ·
որչափ ևս առաւել պարտ է՝ սիրով ըն-
կալնուլ · գիտելով · զի վիշտն իւր՝ գայ
'ի քաղցր Ձեռանէ , և 'ի գթած Հօ-
րէ · որ միայն այնպիսի պատժական դե-
ղովք · շնորհէ զյաւիտենական փրկութի̅
նորա :

# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Զիա՞րդ պարտի առնել քահանայն
առ 'ի շահել հնարագիտութե̅
զհիւանդն , վ̅ն մատուցա-
նելոյ նմա զղ̅ջ. խոր-
հուրդ :

Յորժամ հիւանդն 'ի կեանս իւր բա-
րեկամ էր սր̅ խորհրդոց · չէ հարկ
վարել ը̅ նմա հնարիւ առ 'ի շահել զնա :
Նա ինքն խնդրէ : Իսկ եթէ ոչ · հա-
մար-

որձանկաբար կարես յիշեցուցանել նմա :
Որ սովորն է՝ ընդունել զդեղօրեայս .
… զարհուրի . յորժամ 'ի կարգադրութե
…տշկին դան : Դժուարին է՝ վասն այն
…խեաց՝ զոր յորդորելով 'ի յընդունել
…թ խորհուրդս . կարծեն հասեալ վաղ
…մնն կենաց իւրց : Եղբ՝ արա այսու
կերպիւ . ցոյց իմաստութ զորոգայթն
մահու . որոյ ամենեքեանքս ենթակայ
եմք : Մի տար՝ ոչ կայուն յոյս կենաց .
և մի՛ զարհուրեցուցաներ զնա բօթ աւ
ետեօքն մահու : 'Ի զօհելն զտատրակն՝
սահմանիւք . զի թէ բեկանիցեն զպա-
րանոցն , այլ ոչ խղեսցեն ամենեւին 'ի
մարմնոյ : Սակայն մասն ինչ էր կցեալ .
և մասն ինչ անկեալ : Արդ՝ ահա այս
լիցի պատարագն նորոյ քոյ : որպէս զի
լիցէ հաճոյ այ, արա . զի 'ի քեզ գտցի
աղն խոհեմութե . [illegible]
փոխոյէս զաղ : զհապաղ : 2. մեկնեալ հե-
ռացո՛ դոյզն ինչ զհիւանդն 'ի կենացս
յայսմանէ . յառաջադրելով նմա զոր-
գայթն մահու . և փոքր ինչ թոյլ տուր
միացեալ յուսովն փարատիլ 'ի հիւան-
դութեն ցաւոյ, թող զնա 'ի մէջ այո . և
'ի մէջ ոչ ի : ա . միով ոտիւն յաշխարհի .
և միւսովն 'ի յաւիտենականութե . նման

այնմիկ հրեշտակի , զոր ետես Յօհան
նէս • որ միով ոտիւն կայր 'ի վերայ եր
կրի • և միւսովն 'ի վերայ ծովու ։ Այ_
լապէս՝ եթէ դու հաւատարմանես զնա •
և ասես՝ ոչինչ գոլ որոգայթ մահու •
նա յայնժամ սկսանի յապաղեցուցանել
զմ̃ք խորհուրդսն ։ Իսկ եթէ յուսահատ
առնես զնա • դժուրին է՛ • զի ըմբռնիցի
յերկիւղէ • քանզի բևեռես զանուննս մա
հու 'ի սիրտ աշխարհայնոյ միոյ ։ Թէպ̃
նա խոստովանի • և հաղորդի ։ բայց ա
տուած գիտէ ։ Արդ՛ թող զնա մնալ 'ի
մէջ յուսոյն և երկիւղին ։ Ե՞ւ ծանո նմա
հնարիւ իւիք • թէ ամենայն խորհուրդքն
են գործունեայ միջոցք տակս փրկութ̃
հոգւոյ • և վասն բժշկութ̃ մարմնոյ ։ և
զի ա̃ծ զբզմս դարձոյց 'ի կսկծելի և յո
րոգայթաւոր հիւանդութ̃ առ այն վաղ
ճան միայն • զի տեսցեն զչարիս իւր̃ց •
և խոստովան լիցին ընկալեալ տրամա
դրութ̃ ։ և վասն այնորիկ կարէ գոլ • թէ
ա̃ծ իմաստնագոյն տրամադրութ̃ դար
ձուցեալ իցէ զնա 'ի յայնպիսի կացու
թի • որպէս զի հայեսցի 'ի սիրտն • և
'ի սրտէ խոստովանեսցի զյանցանս իւր ։
Արդ՝ որքան կարելի իցէ վաղվաղակի
դուն գործեա իսկիզբն խոստովանեցու
ցանել

ցանել նմա զվնասն: Զի եթէ հիւանդն յուսադրեսցի 'ի քէն. և 'ի բժշկէն. և մանաւանդ 'ի յատուկ ըղձէ ապրելոյ. գուցէ զնա զանցառարեալ. կամ գոնեա դանդաղեալ 'ի ա̃ծ խորհրդոց: Եւ՛ թէ 'ի բանի աւարտեալ իցէ դիպուածն զնմանէ: կամ իցէ 'ի սաստիկ որոգայթի. յայնժամ պարտական հետևիլ ա̃ծյ Մարգարէին Եսայեայ. և ասել յայտնապէս. հրաման տուր վասն տան քո. քանզի մեռանիս. և ոչ կեցցես. եսայ": 38: Քանզի դիւրին է՛, զի տեսանելով բարձումն ներկայ կենայ, խնդրիցէ առ 'ի ոչ կորուսանել զոնեա զապառնին: Մեով այնու նախագուշակութե՛ զոր արար ա̃ծն առ արքայն եզեկիէլ. բաւական եղև հանել 'ի սրտէ. և 'ի յաչաց զվտակս արտասուաց, Եւ՛ էր եզեկիէլ 'ի լալն մեծ: Մեծագոյն հիւանդութեն, պարտական մեծագոյն դեղ:

ԳԼՈՒԽ

# ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ։

Թէ զորպիսի խոհեմութեան, և զաւէր վարել պարտ իսկ է՛ քահանային ՚ի մատուցանելն զսր̃բ խորհուրդս․ և մանաւանդ զխորհուրդն Ապաշխարութեան։

Յոչ կամիցիս հիւանդին ը̃նդնիլ զսր̃բ խոր-
հուրդս․ և յատկապէս զխորհուրդն
ապաշխարութեան, ոչ պարտիս դու լսել
նմա․ եթէ ևս ոչ ծանիցես յայտնապէս
զխղճն նր̃։ Կամ եթէ նա չիցէ սովորեալ
խոստովանիլ քեզ։ Այդ պարտիս ասել
ցնա․ եթէ դէպ ՚ի յորպիսի անձն ունի
զխիղճ առ ՚ի յանձնել ՚ի յայնմիկ կացուե
իւրում զխղճմտանս իւր։ Եւ եթէ նա
ընտրէ զքեզ․ մատէն է՛ զի ցուցցես
զքոյդ սէրն։ ոչ միայն համբերութ̃բ
ունկնդիր լինելով նմա․ այլ օգնելով
նմա հարցմամբ ը̃ն որպիսութե անձին։
ածելով զնա ՚ի ներգործութի ճշմարիտ
զղջման։ Զգուշացիր՝ սակայն զի հնչեսցէ՛
նա

նա 'ի վերայ քնարի իւրոյ · և ոչ կար-
ճառօտաբար 'ի վերայ քոյդ : վասն զի
հնչումն՝ որպէս զի հաճոյ լիցի այ , պար
տի գոլ՝ որոյ հպի լարն · բայց հպի այն
յատուկ քնարին · [illegible]
[illegible]
[illegible]" · 14· 2· Քանզի ոչ պարտիս հար
ցանել այնու կերպիւ · որ նա սովորա
բար միայն պատասխանիցէ · այո · Հայր
մր : կամ · ոչ : Հայր մր : Վասն զի այս
լինի հնչեցուցումն 'ի վերայ քնարի քոյ ,
այլ՝ սակայն նա ինքն խորհեսցի զզան-
ցեալ մեղաց իւրոց · զի որում հիւանդու
թին թողու մատծել : և խնդրեսցէ նա
ինքն կատարեալ սրտիւ թողութին յայ :
զի այն խակ է՝ ամենեւին հպել 'ի յատուկ
քնար իւր · և յատուկ ձեռամբ : Այլա-
պէս՝ ոչ լինի հնչումն ընդունելի առ աս
տուած · և ոչ յարմար նախապատրաս-
տութին առ 'ի ընդունիլ զորբացուցիչ
շնորհս՝ միջոցաւն մր խորհրդոյ Ապաշ-
խարութեն : Սակայն զայս գիտասցես հա
նապազ , զի յորժամ հիւանդն իցէ այն
քան պաշարեալ 'ի հիւանդութէ, որ բառ-
նայ իւր զամ շաւիղս առ 'ի խորհիլ զմեղս
իւր : 'ի յայնժմիկ դիպուածոյ պարտիս
բաւականանալ ամենայն փոքու · և լցու-

ցանել

ցանել դու սիրովն քոյ: Զգոյշ լեր. զի բարի նախանձն քո ոչ բաւականասցի առ 'ի արձակել զհիւանդն 'ի մեղաց. այլ նաև որքան կարելի իցէ՝ ազատել զնա 'ի պատժոց՝ որ մնայ 'ի հանդերձելումն. և զոր կամի արդարութիւն Ածային: քանզի յայնժամ լիցի կտ̃րլ և ամբողջ սէր քոյ: Ես զարհուրիմ. յոր ժամ զմտաւ ածեմ զայն կապերտն՝ զոր ետեսն Յօհաննէս սփռեալ 'ի վերայ սանդղոյ Աթոռոյ գառինն: Ոչ էր 'ի վերայ նոյնոյ ձևացուցեալ. ոչ 'ի վերայ կոտորուածոցն հինգ քաղաքացն: ոչ ջրհեղեղին ջուրց: ոչ բոցոյն դադանու: և ոչ խաւարին սինայի: այլ միայն 'ի վերայ ալէկոծեալ ծովու: ևշուրջ զաթոռոյն որպէս ծով ապակեղէն. նման ապակւոյ. յայտնուէ: Ածային Արդարութիւն ոչ միայն արկանէ յինքենէ. և անարգէ զանպարկեշտութիւն. զյափշտակութիւն: զորբապղծութիւն. և զծանրագոյն մեղսն: այլ նաև ատէ սաստկապէս զթեթևագոյն մեղսն. և զներելիս: զի որպէս ծովն ոչ միայն արտաքսէ յինքենէ զդէշս հոտեալս. և զնաւս բեկեալս. այլ նաև զփրփուրսն. և զկճեպս փոքրագոյնս ուստրայ: Արդ տես ահաւասիկ թէ

ուր

ուրէ՛ ժամանելոց սէրն քո դէպ՚ի հիւանդն։ Գուն գործեա. զի նա ցաւեսցի զմեղացն. ոչ միայն զծանրագունից. այլ նաև որքան կարելի իցէ եւս զներելեաց ։ Վասն զի զղջումնն իցէ նման ծովու. որ խորասուզեսցէ զամ մեղս. զի ամենևին ոչ մնասցէ առ՚ի վճարել՚ի հանդերձեալն։ Ուստի կարիցէ ասել, որպէս ասացաւ զեգիպտացւոց խորասուզելոց ՚ի ծով կարմիր ։ Եւ ոչ մնաց ՚ի նոցանէ, և ոչ մի ։ Ելից. 14. որպէս զի բարւոք ընկնիցի զլիակատար ներողութին ։ Այսոքիկ մեղք ոչ ազատեն ՚ի քաւարանէն. եթէ անցցէ հիւանդն ՚ի միւս կեանսն բծաւորեալ ՚ի ներելի մեղաց։

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ։

### Թէ որպիսի կերպիւ պարտի քահանայն ածել զհիւանդն ՚ի առնել զկտակ։

Հոգն ոչ երբէք կարէ հանդարտիլ. կամ զկայ առնուլ. մինչև ոչ հասեալ ժամանեսցէ ՚ի շրջանն իւր ։ եթէ



397/-57 819, 22848

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ-Арм.ССР

սէրն քո դէպ 'ի հիւանդն ճշմարիտ է՛ , ոչ պարտի հանդչիլ և դադարիլ · մինչև ոչ հասցէ 'ի միջակէտն իւր · որ է՛ յաւիտենական փրկութիւն հիւանդին: Արդ՝ չէ՛ բաւական · զի դու պաշտպանեսցես զնա՛ առ 'ի ուղղել ԶԷ այ զշաւիղն : այլ և պարտ իսկ է՛ , զի հաշտեսցի ընդ աշխարհի : Հողալցես զհոգի հիւանդին · որպէս բարի հայր զդստերէ իւրմէ, որոյ եւ 'ի օժիտ: արքայութիւն մեծաց: և արքայութիւն խոնարհաց : յուդ″ · I · գլ հոդալով վասն նո զյաւիտենական բարիս · որ է՛ արքայութիւն մեծաց : և առ որ մնայ ժամանակաւորն · որք են արքայութիւն խոնարհաց · Արդ՝ բերան քո լիցի յորդորել զնա՛ · և ածել զնա՛ առ 'ի կարգադրել զերան իւր · առ 'ի դադարեցուցանել զամ անկարգութիւն · և զկռիւսն · որք կարեն ներհակիլ Էդէմ ժառանգակցաց : և առ 'ի կարել վերջապէս մեծաւ հանդարտութ զգուշանալ առ փրկութիւն հոգւոյն · Յորժամ հիւանդն պատրաստ է՛ առ 'ի առնել ղկտակ · դու պարտիս բարւոք նկատել՝ ծածկելոյ · մինչև 'ի պատահիլ մեծի հարկաւորաւն · եթէ ոչ իցես յարմար անձն առ 'ի օգնել նմա :

Գերքան զընտաւան պարտիս զգուշացու

ցանել

ցանել զհիւանդն. զի թողցէ զինչս. կամ
զհաստատ ինչ եկեղեցւոյ քոյ. կամ քեզ:
Բայց թող. զի հիւանդն բաժանեսցէ
զինչս իւր: որպէս ինքն կամի: Հետեւեաց
քաջութեն արեգական. որ զբարիս հա
զարաւորս. եւ հազար անգամ հզօրէցս
առնէ յաւուրն ՚ի բարերարութեն երկրի.
եւ անվշտապէս ջերմացուցանէ զնմ
տունկս. եւ կազմէ զհանդս եւ զհրահալէ
լիս ՚ի գող նորա: սակայն զոչինչ առնու.
եւ զոչինչ պահանջէ ՚ի նմանէ: Եւ եթէ
քարշէ առ ինքն ՚ի նմանէ զգոլորշիս. մի
խառնէ զայնս՝ ՚ի բարութեն նորա.
մաքրէ. սրբէ. եւ ՚ի յանձրեւ դարձու
ցանէ.

# ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ։

*Թէ զօրպէսի խոհեմութեն վարել պար տի. քահանայն առ 'ի հաստատ պահել զհիւանդն 'ի բարւոք յառաջադրութեան ։*

Ոչ կարէ ասել. թէ զորքան ուժգնու թիս ունի ներկայ առարկայն առ զգայութիւնս, առ 'ի ապականել զմիտս ։ Մովսէս՝ որ լսելով 'ի բերանոյ այ զկռա պաշտութիւն, զոր առնէին հրէայքն, զոր և լուաւ ականջօքն 'ի հայիլն յորթն․ և 'ի պաշտօն ժողովուրդն դիւոյն․ այնքան խստացաւ․ որ արար կոտորել քան և չորս հազար արանցն 'ի նոցանէ ։ Ես ե փես զորբն․ և զխոստմբա նշ․ 'ի բարձրունս բրդեալ, ասէ․ ապանցէ իւրաջանչիւրոջ զեղ բայր իւր․ և զբարեկամս իւր․ և զընծերս իւր ։ եւեց ։ Եւ սակայն է՝ վարդապետութի Աւետարանական և աստուածային․ զի եթէ ակն մի է՝ մեզ առիթ սայթաքման և մեղաց, հանի 'ի տեղւոյն․ և ոչ ըմ բռնեալ

բռնեալ լինի յետոյ 'ի ձեռին, առ 'ի
հայիլ միւսովն ։ այլ արկանի 'ի բաց և
հեռի ։ Եթէ ակն քո գայթակղեցուցանէ զքեզ.
հան զնա. և ընկեա 'ի քէն ։ Աւետ. Մարկոս.
Այս վարդապետութիւն ծառայէ վասն
քոյ. որ պաշտպանես զհիւանդն ։ Ուս
ջիր ուրեմն առ 'ի հեռացուցանել 'ի սե
նեկէ նորա զամ առարկայս. որք կարեն
շփոթել զմիտս. զոր օրինակ. զզէնս, զվա
վաշտական պատկերս նկարեալս ։ կամ
զանձինս՝ որք ժամանակաւ եղեալ են
ախիթք մեղաց նմա ։ Զի յայնժամ ժամա
նեալ հասանէ ամենայն գունդն լեգէո
նախումբ կատաղեաց 'ի մահճին հիւանդին ։
Նաւանէր զԷարջունԷ ԴԾ. ջանզի զաջեա ծա
Հոնաց ունէր ։ յայս'' ։ Քանզի խնդրէ ամ
ջանիւ 'ի նկարել 'ի յերեւակայութեան նմա
զվայելեալ անցեալ զուարճութիւն ։ Այ
լապէս ոչ բարւոք լինի. զի 'ի միոյ կող
մանէ երկիցէ յահագին դատաստանէն՝
առ որ կոչի 'ի ձեռն մերձաւոր մահուան ։
և 'ի միւս կողմանէ պաշտիցէ զհին կուռս
իւր. կոչելով 'ի ներկայ առարկայէն. և
համանգամայն 'ի դիւաց ։ Ոչ՛ բարի. զի
յորժամ նախապատրաստես զհիւանդն 'ի
յաւիտենական շաւիղն. կինն՝ որդիքն.
կամ ազգականքն լացցեն 'ի ներկայութե

աչաց նո՛ր : Ոչ գիտեմք մեք. զի բաղում
մարտիրոսք եղեալք զպարանոցս իւր
եանց 'ի ներքոյ սրոյ. առ 'ի բարձ
րանալ դեր քան զդասս պետուեց. ոչ
գոլով թագն հեռագոյն. քան թէ մա
տամբ իւիք հեռի 'ի գլխոյն. դարձան
յետս՝ 'ի տեսանելն զկինն լալագին ը̄
որդւոյն՝ որ 'ի վ̄ր բաղկին. կամ զպարա
նոցաւն փարեալ : Բաղխեցա ծանեաւ. զի
զնա որ ահարկու խաղմուտէ տահճացն ոչ զար
հուրեցոյց. և ոչ խածանուածն կողման՝ ահօսն
լըծոյց. կինն խերմամբ մանկանն՝ ողորմելի ար
փառօք խաւէ պարբեաց. առէ ճէն Ամբրո
սիոս : Տեսանելին զկինն՝ որ լայ. և զոր
դիսն՝ որք մորմոքեն. ոչ կարէ այնպիսի
տեսութին ոչ շփոթել զմնեամ զնա 'ի բա
րւոյ յառաջադրուէ. և ոչ վհատացուցա
նել զնա և նեղել 'ի մտանել 'ի յաւիտե
նականութին: Ջուր՝ ջուր՝ պխտոյ է՛. և
ոչ աղաղակ եգոչումն՝ աղաղակէր Հայ-
րապետն առ այնս յիմար կուսանսն, որք
աղաղակէին առանց շարժելոյ առ 'ի ան
ցուցանել զհուրն. որ այրէր զտաճարն
չասատուածուհւոյն վէսթայի : Հիւանդ-
ոք 'ի կէտ մահուան՝ ոչ ունի զպիտոյս
արտասուաց. այլ հայցուածոց: Ուստի
աղդականքն եթէ կամիցին կալ 'ի սենե

կի

կի հիւանդին . յորդորեալ զնա . զի հե-
ռասցին յամենայն ներգործութէ ցուց-
ման ցաւոց . և աղաչեսցեն զԱծ 'ի ներ-
քոյ ձայնին վասն նորա . սակս փրկութե
հոգւոյ նր :

## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ:

Թէ որպիսի խոհեմութբ պարտի վա-
րիլ քահանայն ը̃ բղջախոհ
հիւանդին :

Յորժամ ցաւն հիւանդին է' հրապա-
րակաբար . ոչինչ դոյ դըժուարու-
թն . զի դեղն և լիցի հրապարակաբար :
Պարտ և պատշաճ իսկ է' պարաւանդել՝
առ 'ի արտաքսել զկինն 'ի տանէ : Քան
զի գոլով մեղքն յայտնի . լիցէ նաև յայտ-
նի ապաշխարութին : և ուղղութին : ընդ
որպիսութե յանցանաց՝ եղիցի՝ և ներումն հաւ-
ատածոց : ողջոց . իսկ դժուարութին յայտ-
կայանայ . եթէ վավաշոտական իրն ծա-
ծուկ լիցէ . և ոչ կարիցէ արտաքսել զկինն :
կամ վասն զի արտաքսելով այնու ա-

նուամբ . համբաւն կնոջն տարածեալ ապականիցի . կամ եթէ իցէ մերձաւոր ազդական : կամ զի հիւանդն իցէ այնպիսաբար յարեալ՝ որ ոչ կարասցէ առ ՚ի բեկանել զգարշելի միութիւն : եթէ դուստէն ոչ ծառայեսցես խոհեմութբ̃ : Ճշմարտիւ . զի ուր քահանայն հնոյ օրինացն՝ լուցանէր զզամբարն առաջի տապանակին դէպ ՚ի յերեկոյին . դու ոչնչացո՛ եւ շիջո՛ զա̃մ զլղացեալ յոյսն փրկելոյ զհիւանդն . որ է՛ ՚ի վերայ երեկոյի կենաց նր̃ : Կամ թէ կլինն այն է՛ օտար ՚ի յարենէ . կամ մերձաւոր ՚ի յազգականուէ : եթէ է՛ օտար . ջանա՛ ամենայն կարողութբ̃ դարձուցանել զնա՛ ՚ի սերտ սրտէ ՚ի նիհարուէ վափաշոտութե . Եգուն գործեա՛ , զի ՚ի ներքոյ անուան հարկաւոր ծառայութեն կալցէ : Եթէ ոչ ունի զայլ կին ՚ի տանն : Եւ նմա՛ արասցէ զայնս ծառայութիւնս , որք են զկնի . եւ ընդմիջակայք առ անձն նր̃ : Եւ այսու կերպիւ բառնալով զնա՛ ՚ի ներկայութէն . թերեւս նաեւ կերպիւ իւիք շիջցի սէրն ողորմելի հիւանդին՝ որ դէպ ՚ի նմա : Քզի ը̃ այնմ զոր ակն ոչ տեսանէ , սիրտն ոչ ցաւի : Եւ մանաւանդ պատահեսցի այն քեզ . եթէ անդանդաղ ցուցցես զզժոխս բացեալ :

յոր

յորժամ նա՛ տակաւին ըղձայ 'ի ծայրն ե-
ղեր խաղալ որոգայթիւ ։ Բայց եթէ
յետոյ սովորութին · չարութին · կուրութին
հիւանդին 'ի յունայն դարձուցէ զասա
ցեալն Հոգւոյն մրյ · թէ սէրն է՛ զօրեղ
որպէս մահ ։ այնու կերպիւ, զի սանձար
ձակ ռէրն փափաշոտական խորհրդոց նր
յառաջանալով, ոտնակոխ արասցէ զա-
մենայն երկիւղ · զամենայն որոգայթն
մահուան · ոչինչ հոգալով ամենեւին կո
րուսանել զհոգին 'ի յաւիտեան · առ 'ի
վայելել նաեւ բոպէ ինչ զներկայութի ա
մենադարշելի առարկային · զի՞նչ պարտիս
առնել ։ Մի՞թէ պարտ է՛ խնձասել, թէ
բարձի թողի արա՛ զնա՛ 'ի մոլութն իւր
ում ։ և հետեւապէս 'ի ձեռն դատա
պարտութն ։ օրբէեցա* զբաբէիլռն · Լ Նա ոչ
օրբէեցա ։ Նողցու* զնա՛ ։ ոչ ։ այլ մանա
ւանդ պարտիս մասնակցել ռսէրն քոյ ։
Յորժամ դտանիս դու 'ի յայնպիսի դժ
ուար պատահմունս · զի հիւանդն է՛
արբեալ 'ի բաժակէ հեշտութեն · զի առ
յառաջակայ երկիւղն յաւիտենականուե ·
եւառ յայտնի որոգայթն կորուսանելոյ
զհոգին՝ ոչ զգաստասցի · ոչ պարտիս
այսու եւս յուսահատիլ ։ այլ մանաւանդ
դտանել զդեղ մի · որ է՛ վերջին ծայրն ։
Բայց

Բայց խոստանամ գոլ գործունեայ ։ ոչ
զի ողորմելին այն ոչ դատապարտեսցի ։
Արդ՝ յառաջադրեա՛ ՚ի յայնմիկ դիպուածս.
զի ծանծկապէս պսակեսցի . և մեծաւ
խոհեմութ կարես զայս առնել , յորժամ
հիւանդն ազատ լիցէ ։ Ոչ դժուարին լի-
նիցի . զի զայն յառաջադրութիւն ոչ ընկալ
ցի նա առ ՚ի ոչ կորուսանել ՚ի նոյնում
ժամանակի . և զզուարճութիւն սրտի իւրոյ .
որ արդէն տեսանէ յափշտակիլ ՚ի մահ
ուանէ . և զզուարճութիւնն երկնից . զոր
մատուցանէ նմա յաւիտենական երջան
կութիւն ։ Գիտեմ . զի այսպիսի խորհուրդն
քեզ օտար իմն թուեսցի . բայց չէ՛ այն
պէս , եթէ զմտաւ ածես զգինն հոգւոյ
մերոյ . և որքան գնոյ եղև Յսի . և այ-
լապէս ոչ գոլ այս նորեղակի դիպուած
իմն ։ Գիտեմք՝ զի բազումք ՚ի յազնուա
կանաց միայն առ ՚ի կատարել զվախճանս
իւրեանց՝ ընտրեցին ՚ի հարսն՝ զկանայս
ծառայօղս ։ Միթէ չէ բաւական այն ՚ի
վախճան փրկութ հոգւոյ ։ դիցուք թէ
՚ի մէջ վավաշոտին և հոմանւոյն գտանի
ցի անհամաձայնութի կացութեն ։ Ուստի
յորդորեա՛ զհիւանդն . և արա՛ ընդու-
նիլ զխորհուրդ քո ։ Արա՛ , զի երկա-
քանչիւրն ես առաջի Աւագ քահանային՝

է միով վկայիւն, որ դու կարօղ ես ընել
զնա որպէս հարկ իսկ է ։ Զպսակն
խորհուրդն կատարեսցեն ։ զի առ ապայն
հայեսցին 'ի միմեանս միաւորական սի
րով ։ Կատարեալ այսմ դու տեսցես ·
առապարք 'ի յուղիղս · և դժուարինք 'ի ճա
նապարհս հարթս ։ Եսայ" ։ 40. 4. Զի ամ
դժուարութիւնք կալեալ լինին · և բառ-
նին ամ որոգայթք ։ Իսկ եթէ եղեռնա
գործ հոմանին այն՝ իցէ մերձաւոր ազ
գական հիւանդին · զինչ առնես արդեօք ։
Արտաքսել ոչ կարէ · պսակել ոչ կարէ ։
Եզի՞նչ արդեօք ։ Ես 'ի վերայ այսմիկ
ոչ զայլ ինչ կարեմ ասել քեզ · և ոչ
զայլ խորհուրդ տալ · եթէ ոչ դնել ա-
ռաջի աչաց նր, որքան քաջութե կա-
րող ես՝ զդժոխս բացեալ · զի 'ի վե
րայ այնմիկ վախճանական եզրին կացեալ
է՛ նա, առ 'ի գլորել 'ի յայն՝ 'ի մեղաց
իւրոց ։ Մի երբէք բարձի թողի առներ
զնա · և միշտ յիշեցես զնոյն կէտն · զի
փրկութե նր կայ 'ի մեծագոյն որոգայ
թի · եթէ ոչ արհամարհիցէ և մերժես
ցէ զառիթն ամենազարշելի ընկերակ
ցութե ։ 'ի վերայ այսր ամի մի յուսար դու
'ի քեզ · դիմեա ամ փութով առ Տր ։
զի նա միայն կարէ առնել 'ի յայնպիսի

կարծր քարանց՝ զարձանս՚ գեղեցիկս՝ առ ՚ի տնկիլ ՚ի յերանելի քաղաքն ։ կարօղ է՛ ՚ի տարանցս յայսցանէ՝ յարուցանել որդիս աբրահամու ։ Կառավարեա զհիւանդն . զի առանց մեծի հարկաւորութե՝ ոչ կոչեսցէ զնա . և մի կամեսցի զնորին գալն ՚ի սենեակ իւր ։ Ծանո՛ նմա . զի կամին զնա ներկայ առ իւր ։ Է՛ կամիլ ներկայ զորոգայթ ընկերն առ ՚ի մեղանչել ։ Եւ հետևապէս մեղանչէ մահացորէն . եթէ առանց մեծի պատճառի՝ կոչեսցէ զնա առ ինքն ։

# ԳԼՈՒԽ Խ ԻՆՆԵՐՈՐԴ ։

Թէ որպէս պարտի վարիլ քահանայն ընդ հիւանդին ։ եթէ պատեալ իցէ յատելութե ։

Հաւատա՛ ինձ . զի ոչ ոքէ՛ . կամ յոյժ սակաւք են այնոքիկ . որք ժամանեալ առ այս վերջին օրն մահուան , ոչ տիր՝ շիջուցանեն զբոցն ատելութե ՚ի սրտէ ։ առ ՚ի վառիլ այնու հրոյն՝ զոր երբեր

Յա՟ 'ի յերկիր : հուր եկի արկանել յերկիր :
Եւ թուի թէ հետևեն այնմ ժողովրդ-
եանն . որ միանգամ 'ի տարւոյն շիջու-
ցանէին զհուրս իւրեանց . առ 'ի լուցա-
նել հրովն թագաւորին իւրեանց : Իսկ
դու ծանիր հաւաստեաւ . զի գործն ոչ
է՛ այսպէս : Ընկալեալ իցէ երբեմն զնա-
խատինս . կամ զվնասս ինչ . կամ 'ի վե-
րայ ընչից . կամ 'ի վերայ յատուկ ան-
ձին իւրոյ : եթէ դու աղաչեսցես զնա
թողուլ . նա՛ քեզ վաղվաղակի պատաս-
խանէ : թէ 'ի վաղուց ներեցի ամենայն
ընկալեալ անիրաւութեցն . իսկ եթէ դու
կրկնեսցես առ 'ի տալ զխաղաղութի ընդ-
վնասարարին . որպէս զի այս կարիցէ
համաձայնիլ ընդ արդարութեն : փախչի
յայնմանէ . և մանաւանդ քեզ պատաս-
խանէ . կամիլ թողուլ զընկալեալ վնասն
իւր՝ դատաստանին : Եւ՛ ես գիտեմ փոր-
ձառութ՟ . զի ոմանք հիւանդք խօսելով
այդու կերպիւ , արձակեցան 'ի յիւրեանց
Խոստովանահարց . և այնու խղճի մտօք
արկան 'ի հանդերձեալն : առ 'ի տեսա-
նել 'ի լայնս զամենայն շաւիղն Աստուա-
ծային արդարութեն . որով հետև կամին
'ի յեղբարս իւրեանց զամենայն շաւիղն
մարդկային արդարութ՟ : Յորժամ դու
հպիս

հայիս 'ի հիւանդն՝ զի ներեսցէ 'ի նմանիս
այնպիսիս՝ ոչ դադարեսցիս. այլ ամե֊
նայն կարողութ հաստատեսցես զնա առ
'ի թողուլ զխաղաղութի նաև 'ի գիրս.
և հանդերձ վկայիւք ոմամբք : Որքա֊
նիցս արասցէ նա զայնպիսի հրաժարումն
պատշաճեալ ճշմարիտ քրիստոնէի. ոչ
վասն այնորիկ արդարութին թողու զիւր
առնելի դատաստանն : Ոչ կինն նր. և
ոչ որդիքն. որք թոռն. որք ընկալնուն.
և որք ընկալեալ են զվնասն՝ միաբանի
ցին, թէպէտ միաբանեալք 'ի վնաս :
Այլ մանաւանդ արա յորդորել զժա
ռանգս իւր. զի ներեսցեն. և արասցեն
զխաղաղութի. յորժամ աղաչիցեն : և
պարտին առնել զայն իմաստուն խոր
հրդով. որպէս զի նա ներելով յատուկ
անձամբ. ոչ ունեսցի երբէք զներքին
խղճ ինչ 'ի վրէժխնդիր լինել այլոյ անձին:
Բայց յորժամ հանդիպեսցիս հիւանդի
ուրուք՝ տակաւին վառեալ 'ի սիրտ իւր
'ի բարկութէ վս գոլոյ նոր անիրաւութեն
մի՝ խոկոյն խեղդեսցես զնա. թող. զի
նա թափեսցէ ի քեղ զթոյնն. զոր ունի
յաւելեալ 'ի սրտի իւրում : Մի հակա
ռակիր. մանաւանդ ցոյց կրկնելով զի
իրաւունս նր՝. ցաւակից լեր վասն արհա
մար

մարհման. կամ ընկալեալ վնասու. վասն զի այն ոչ կարէ առնել. թէ որքան օգնեսցէ առ 'ի հանդարտեցուցանել զխռովեալ միտսն նր̅: Ուստի իմաստութբ̅ և գիտութբ̅ ծանօթանամ զպատուիրանաւն Քսի̅ ասելով. թէ և ես լինէն ունէիցի իրաւունս. Ած̅՝ որ է՛ բացարձակ տր̅ մեր՝ կամի. զի թողցուք. և տես՝ զի դու առնելով զայն խոնհեմութբ̅ և քաղցրութբ̅, ածցես զնա 'ի քոյդ նպատակ:

## Այլ կարճառօտ զգուշութի̅նք քահանային. առ 'ի կրթել սրբաբար յայնպիսի պաշտօնն.

I.

Զգոյշ լե՛ր և ծանի՛ր. զի մարտնչելոց ես ը̅ դժոխային լեգէոնախումբ կաճառացն՝ որք գան 'ի մահիճս հիւանդին՝ առ 'ի յափշտակել զնա. և յոչինչ դարձուցանել զզգուշութի̅նս բարի նախանձու քո. խնդրելով արհեստի և դաւաճանութբ̅ 'ի յետս կոչել զքեզ. ոպ̅ զի դու դարձցիս՝ և ոչ կարասցես հայել 'ի նա քաղցր աչօք՝ որոյ օգնէիր. և ես յոյժ ատելի և ձանձրալի թուիցիս առ նա:

Պա

2․

Պատահիցի քեզ երբեմն՝ զի օգնելով միայն 'ի կանանց՝ իցէ շողոքորթեալ 'ի բանսարկուէն առ անհամբերութիւն․ կամ իցէ արտաքոյ զգայութեանց․ կամ թէ պատահեսցի նմա այնպիսի ջերմութիւն․ որ յանկարծակի ամենևին բացեալ լիցի առաջի աչացքոց անպարկեշտութեամբ իւիք ։ Բայց դու մի՛ բարձի թողի առներ ։ և 'ի յայնպիսին՝ հոգասցես․ զի կացցեն անդ ներկայ այլ կանայք պարկեշտք, առ 'ի արգելուլ զանպարկեշտ բանին ։ Այսու տ̃միւ սրսկեա զնա ջրովն օրհնելով ։ յանձնեա զնա տ̃ն ։ և յորդորեա զնա յանձնել այլոց շրջակայիցն 'ի պաշտպանութիւն ամենամաքուր կուսին ։ Եւ ապա տեսցես․ զի յայտնի պաշարումն փորձողին դադարեսցի․ նա և վիճումն ։

3․

Երբեմն կարէ պատահիլ քեզ․ զի պաշտպանելով զկիսամեռ հոգեվար մի ։ յանդգնաբար յառնէ ուժգնութեամբ․ և ցուցանէ զայնքան քաջութիւն․ որ զքեզ հաւատացուցանէ հեռի գոլ տակաւին 'ի մահուանէ ։ այլ դու զգոյշ լեր 'ի յայնս․ և գիտասցես, թէ այսոքիկ են նշանք մերձեցման մահու․ և այն քաջութիւն գայ

դրդեալ

դրդեալ առ հիւանդն . կամ 'ի վերջին ուժգնութեան քննութեան . կամ 'ի պաշարմանէ թշնամւոյն : առ 'ի պատրել զքեզ . և առնել . զի թողցես զհիւանդ հոգեվարն յաւար իւր : վասն զի՝ թողցես ամենեւին . պաշտպանեա աղօթիւք . և սովորական սրսկմամբ ջրոյ . և տեսցես, զի փութով անցանեն այնք ուժգնութիւնք :

4.

Օգոյշ լեր . զի ոչ պարտիս գոլ յոյժ յաճախ 'ի բանս քո . ոչ աղաղակօղ 'ի խօսակցութիւնս : այլ քաղցր ձայնիւ, ուրախ դիմօք . կարճառօտ բանիւ և գործունէիւք, խնդրեա միշտ 'ի մխիթարել զհիւանդն :

## Արթութիւն սակս օգնելոյ հիւանդաց :

### Զօրեղ դեղք ընդդէմ փոր ձութեց :

### Եթէ Հիւանդն փորձեալ իցէ 'ի Հաւատոյ : Նախ :

1. Որդեակ՝ եթէ սատանայ բերցէ քեզ զապականութիւնս ամանս ընդդէմ սբյ Հաւատոյ . մի' ունկնդիր լիցիս նմա :

2. Այս մեծաւ քաջութբ . Հրաժարիմ 'ի քէն 'ով սատանայ . որպէս Հրաժարեցայ 'ի մկրտութեն . և պարծիմ 'ի գոլոյ քրիստոնեայ ուղղափառ Հռոմէական :

3: Այս սրտի մտօք . այսու Հաւատով կամիմ կեալ . և մեռանիլ . և Հաւատամ զայն ամ . զոր Հոգին սբ յայտնեաց սրբոյ մօրն եկեղեցւոյ :

4. Որդեակ՝ մի' Հակաճառեր ըդխելին . այլ ասա միայն . տէ'ր . Հաւատամ . Հաւատամ : առանց ունկնդիր լինելոյ մի ճաբանական բանից նորին :

Եւ

Եւ այս է՛ բարեգոյնն առանց բերելոյ
զպատճառս և զլուծմունս առ հիւանդն
'ի յայնպիսի նեղութիս · քանզի յոյժ վաղ
վաղակի դեւն կարէ զայնս ոչնչացուցա
նել 'ի միտս նորա ։

## Եթէ փորձեալ իցէ 'ի յուսահատութէ ։

1. Որդեակ՝ զիա՞րդ երկնչիս · ահա՛ այն
պիսի քաղցր Տր̃ · որ այնքան համ
բեր 'ի կեանս քո · կամի՞ս զի բարձի
թողի արասցէ 'ի մահուան քում ։

2. Յս̃ Քս̃ · մի՞թէ չէ՛ եկեալ յաշխարհ
առ 'ի կոչել զմեղաւորս յապաշխարութիւն ։
եթէ ես մեղաւոր՝ մի՛թէ չես ապաշա
ւեալ · և զիա՞րդ ուրեմն երկնչիս ։

3. Եթէ բազումք են · և մեծամեծք
մեղք քո · սակայն մեծագոյն է՛ անհնա
բար ողորմութիւն ն̃յ · և ընդէր այդքան
ահաբեկիս ։

4. Դատելոց ես 'ի ամենագթած հօ
րէ · և մի՛թէ կարիցես երկնչիլ, թէ քեզ
տացէ զվճիռ դառնակսկիծ ։

5. Մի՞թէ ոչ գիտես դու , թէ ան
յոյս գոլն յա̃ծային գթութէ · է՛ առնել

տն զմեծ եպերումն ։ Ներելով քեզ այն քանիցս՝ եւ քեզ զառհաւատչեայն սիրոյ իւրոյ ․ և այժմ մի՞թէ կարիցես տարակուսիլ զմեծէ սիրոյ նորա ։

6․ Որդեակ՝ մի՛ ունկնդիր լինիր սատանայի ․ զի նա գոլով յուսահատ և դատապարտեալ ․ կամի զի լինիցիս նման նմա , նախանձու , որով վառեալ է՛ ընդդէմ քեզ ։

## Ընդդէմ սիրոյ ընչեղին ։

1․ Որդեակ՝ հաւաստեաւ ընդունիմ ․ զի Թշնամին քոյ բարկացոյց զքեզ անիրաւաբար ։ Բայց դու որքանիցս բարկացուցեր անիրաւաբար զՅս Քրիստոս ։

2․ Մի՛թէ ոչ ըղձաս ․ զի Տէրն թողցէ քեզ զմեղս քո ։ Իսկ դու ոչ կամիս թողուլ զյանցանս արարեալ քեզ վասն սիրոյ Յսի Քսի ։

3․ Ոչ ասես 'ի հայրմերին ․ Թէ Տէրն թողցէ քեզ զպարտիս քո ․ որպէս և դու Թողուս քոյոց պարտապանաց ․ ուրեմն դու

դու ոչ թողլով ընկերին. և ած ոչ թող
ցէ քեզ:

4 Որդեակ՝ չգիտեմ այլ զի՞նչ ասա
ցից քեզ: Ես միայն վկայեմ քեզ որպէս
պաշտօնեայ այ. զի մահն քո մերձ է՛.
և ահեղ դատաստանն այ սպասէ քեզ
առ 'ի դատապարտել զքեզ. եթէ ոչ
թողցես:

5. Արի՛. քաջացիր որդեակ. թող.
արա զայս շնորհս Յսի Քսի. զոր
նա եւս տայ 'ի կոչմանէ իւրմէ. զոր
կամիս:

## Եթէ երկնչի 'ի մահուանէ:

1. Ոմարդ երկնչիս որդեակ: Միթէ
մահն քրիստոնէին. ոչ է՛ ըս
կի զբն յաւիտենական երջանկութեն:

2. Ես կամիմ հաւատալ. թէ դու եր
կնչիս վն ունելոյ զմեղս. Բայց ով է՛
առնելոյ յառաջադիմութեն. և տալոյ
զվճիռն. միթէ ոչ է՛ հայրն քո:

3. Եթէ երկիցես վասն ահի յաղթի
լոյ 'ի սատանայէ: մի՛ երկմտիր, միթէ
ոչ ունիցիս զամենօրհնեալ Կոյսն. զպա_

հապա՛ն հրեշտակ քո . եղիցս բարեխօսս
'ի պաշտպանութիւն քեզ ։

## ԵԹԷ ԸՂՁԱՅ ԱՊՐԵԼ՝ ԽՈՐՀՐԴԱԾԷ ԾԱՌԱՅԵԼ ԱՅ ԴԺՈՒԱՐ ՀԱՓԱՐԷԼՈՒԹԷ ։

1. Որդեակ՝ խղճն քո բարի է՛ մի վաղճանին՝ զոր ունիս ։ Բայց բարեգոյն իր է՛ առնել զկամս ած ։

2. Ով գիտէ, եթէ ապրեսցիս՝ զինչ գործեսցես ։ այսօր մեք եմք 'ի մի կամս . և 'ի վաղիւն 'ի միւսն ։

3. Որդեակ՝ որքանք եղեն . զի եթէ մեռանէին վերաժամանեալ հիւանդութե զոր ունէին . հասանէին փրկութե ։ Իսկ յետոյ երկար ապրելով դատապարտեցան ։

4. Զօրպիսի ներգործութե մեծի կատարելութե առնել կարես 'ի կեանս քո . քան զայն՝ զոր այժմ առնես՝ ընդունելով յօժար սրտիւ 'ի ձեռանէ ած՝ զմահ ։

5. Ուրեմն կաց դու այժմ յոյժ անդանաղան . և ասա ցած . զի արասցէ զամենօրհնեալ կամս իւր ։

Եթէ

## Երբ մեռանի անյօժար որդին վասն Գուղյ Երիտասարդ:

1. Որդեակ՝ տրտմիս՝ զի ես երիտա-սարդ. Մինթէ ած ոչ է՝ որ քոյ: Եւ եթէ է՝ որ. մինթէ ոչ կարէ կատարել՛ի քեզ զամենայն կամս իւր:

2. Ոչ հաւատաս դու. թէ ամենայն բարութեան մեծ մշտ խնդրէ զբարեն մեր: Ուրեմն եթէ կամի որն առնուլ զկեանս քո այժմ. լիցի բարեգոյն վասն քոյ.

3. Ցաւիլն 'ի մեռանիլ երիտասարդ՝ հաւատա ինձ. զի է՝ ցաւիլ ոչ ևս մեռանել: քանզի որքան առաւել ապրիմք. այնքան առաւել մեղանչեմք: որ է՝ Մեծ փիօչ՝ Մեծ է՝ անիրաւութիւն, ասէ Սբն Օգոս-տինոս:

4. Մինթէ ոչ ես որն զկեանսդ դաշամբն առ 'ի կարօղ լինիլ նա ինքն բառ-նալ զնա. յորժամ կամի: Արդ՝ ուրեմն այժմ կամի բառնալ զնա. զիարդ արդարաբար կարես ներհակիլ. յորժամ նա առնու զինչս իւր:

5. Սակայն թողցես ով որդեակ իմ.

թող գործել տ՟ն զգործս իւր. զի զետեղեսցէ զինչս իւր. ո՞չ ինքն կամի:

ԵԹԷ ՓՈՐՁԵԱԼ ԻՑԷ ՅԱՆՀԱՄԲԵՐՈՒԹ՟Է:

1. Տ՟էն գիտէ. թէ որքան դառնու՟նք ցաւոց են 'ի յայդ հիւանդութ՟են: և հաւատամ. զի են սաստկագոյն քան զայն. զոր դու ինձ պատմես: Բայց ասա ինձ որդեակ իմ: մինթէ կարիցեն լինիլ մեծագոյնք, քան զայնս՝ զոր կրեաց Յ՟ս Ք՟ս վ՟ս քո:

2. Այժմ տ՟րն կամի փոքր ինչ անդրափոխել քև: Նա կրեաց այնքան վասն քո. այժմ կամի. զի դու կրեսցես դոյզն ինչ վասն նորա:

3. Մինթէ ոչ ցաւիս զցանցարարեալ ապաշխարութ՟է 'ի կեանսդ վասն քոյոցդ մեղանաց: Արդ՝ ահա զի 'ի յայսմիկ եզերս տ՟րն տայ քեզ զշարժումն, և զնիւթ առ 'ի առնել զնոյնն. և հաւատա ինձ: զի այժմ առաւել արժէ ժամ մի կրել համբերութ՟բ. քան թէ ամ մի կրել ընտրեալ 'ի քէն 'ի կեանսդ կամօք քո:

4. Ասա ինձ որդեակ հաւատարիմ

Թէ . միթէ ոչ խոստովանիս դու . զի վասն մեղաց քոց արժանի էիր դժոխոց։ Եւ յետոյ այժմ այնքանիցս ցաւիս . վասն զի տ՟րն առաքէ առ քեզ զայս ցաւս 'ի բժշկութ՟ի մեղանաց քոց։

5. Լուր որդեակ , ա՟մ բոպէ՝ յորս յօժար կամօք կրես՝ դառնալոց է՛ յաւիտենականութ՟ի բարեաց։ մինչ տ՟ծ վասն ա՟մրոպէի տացէ քեզ զաստիճան մի փառաց առաւելութեան 'ի յարքայութ՟ե . որ տեւէ յաւիտենանս ժամանակաց։

6. Գիտես՝ զի ասաց տ՟րն յաւուր մի ում ցսրբուհին գէլթրուտայ . հաստատեմ զայնս՝ զի կրեն զհիւանդութ՟ի սիրով . զոր նա յղէ . է՛ առհաւատչեայն նախասահմանութ՟ե։

7. Ագէ՛ քաջացիր . զօրացիր . այս ցաւն քո ոչ է՛ տեւելոց շատ . այլ փոքր օր . և թերևս փոքր ժամ։ Համբերեր սակաւ ինչ և տեւեաց։

8. Լուր որդեակ՝ մեղուցեալ եմք . պարտ է՛ առնել ապաշխարանս . կամ 'ի կեանս յայս . կամ 'ի հանդերձելումն . միթէ ոչ բարւոք թուի քեզ առնել զայն աստ 'ի փոքր աւուրս . քան թէ առնել զայն անդ 'ի քաւարանին 'ի բազում տարիս։

Եթէ

## Եթէ մտանէ փհաճամութէ · վասն զի թողուլ զփարթամութես ։

1․ Օ՛ինչ առնել կամիս որդեակ · առ
դէն բարւոք գիտես · զի մերկ մտանեմք յաշխարհ · և մերկք ելանելոց եմք ։ Այսպէս արարին այլք փարթամք · և այսպէս դու արասցես · և այսպէս լինիցի որ եկեսցէ զկնի մեր ։

2․ Զայս կեանս ունիմք իբր պարզ հիւրանոց · և զամ զայսոսիկ իրս աշխարհի իբր պարզ սովորութիւն ։ զինչ կամիս առնել · հարկ է՛ մերկանալ · և թողուլ զընաւսն · յորժամ տրն հրամայէ · որ է իշխան ամցն ։

4․ Լուր որդեակ · կամ սիրով · կամ բռնութբ պարտ իսկ է՛ թողուլ · արա ուրեմն 'ի հարկաւորուէ առաքինութն · և հրաժարեաց ընտրողութբդ յայնմանէ · զոր ամկերպիւ թողլոց ես ։

5․ Զինչ օգուտ լիցի քեզ 'ի ահեղ դատաստանին այ · առ որ գնասցես իշխանութբն ամ աշխարհի · եթէ 'ի մէջ այն քանեաց՝ զատապարտես զհոգի քո ·

Եթէ

## Եթէ ունայնի փճառութիք · Գլ Է՛ աշխարհ:

1. Ո՜ւնչ հոգաս որդեակ · թէ աղքատ իցես : եթէ փարթամութիւնք այսմիկ աշխարհի · կարիցէին զքեզ փրկել, ես ցուցէի վասն քոյ : Բայց մի թէ ոչ գիտես դու · թէ այնք բազում անգամ գահավէժ առնեն զմարդն 'ի դժոխս :

2. Եթէ ոչ ունիցիս հանդիսութեն 'ի թաղման քոյ : զինչ ցաւ պարտի լինիլ քեզ այն : Զի որպէս ոչինչ օգուտ բերէ առ հոգին փարթամին՝ թաղելով փառաւորութբ · և պատուով · այսպէս ոչինչ նախատինս բերէ առ հոգին աղքատի · թաղելով առանց հանդիսութեն :

3. Լուր որդեակ · մինթէ տրն ոչ կամեցաւ մեռանիլ իբր աղքատ : արդ՝ ուրեմն եթէ վարի ընդ քեզ · որպէս կամեցաւ վարիլ ինքն · զիարդ ոչ պարտիս ընդունիլ զայն մանաւանդ 'ի պատիւ և 'ի փառս քո :

4. Թերևս պակասիցին քեզ պատարագք

րադք · զինչ փոյթ է՛ քեզ: Համեմատել զկամս Ը̄ կամացն տն, առ 'ի մեռանել յայնպիսի կացութն, բաւական է՛ · զի այն ընկալեալ լիցի 'ի տեղի հաղարաւոր պտղոց:

ե· Արի · զօրացիր · ասա՛ ցՏր · այո՛ Տր իմ · կամիմ մեռանել աղքատաբար առ 'ի հետեւիլ քեզ: զի 'ի մահուան քոյ ոչ ունէիր · ոչ եւս զծածկոյթս ինչ՝ որ զքեզ ծածկիցէ:

## Ներհայեցումն 'ի Թողուլն · զամենայն ընտանիս զկինն, եւ զորդիս:

1· Որդեակ՝ մի՛ խռովիր · թէ դու թողուս զնա · քանզի ոչ թողցէ զնա նա: միթէ չեն ստեղծուածք նր: Յանձնեա ուրեմն առ նա զհոգս նց · որ դուլով Հայր ամենագութ · ոչ բարձի թողի առնէ զնա:

2· Մինչ ոչ յիշէ տր զձագս ագռաւուց · յորժամ սոքա զնա թողուն: Եւ դու երկնչիս · թէ թողուս զորդիս քո · յորժամ դու թողուս զնա առ 'ի կատարել զամենայն կամս նորա:

Աստ

3. Ասա ինձ որդեակ. միթէ ոչ թողուիր զկինն. և զորդիսն քո առանց հակառակութեան՝ վասն ժամանակաւոր օգտի քոյ: Արդ՝ եթէ թողուս զնա, թողուս վասն օգտի քոյ յաւիտենականութեան. և տակաւին այդքան տրտմիս:

4. Թերևս ցաւիս. զի այլ ես ոչ տեսանիցես զնա. որդեակ. եթէ ունիս հաւատս՝ ոչ կարէ այդպիսի խորհուրդ խռովել զքեզ, քանզի զկնի սուղ ժամանակի տեսցես զնա ընդ քեզ 'ի յերկինս. և 'ի յերանութեան:

5. Մի՛ վասն այսոցիկ խռովիցիս դու, է՛ որդի. որ յաջորդեսցէ քեզ 'ի տեղի հօր: Հայր եմ. և մայր եմ որբոյն դու. և Տէր ընկալող դու:

Վիշտ 'ի մեռանել, վասն ամաչելոյ առ 'ի խոստովանել զմի մեղս:

1. Որդեակ՝ խոստովան լեր զմեղս քո: միթէ չէ մեծ վիշտն քո 'ի ծածկելն, յորժամ խղճմտանքն քո նեղէ զքեզ, քան թէ խոստովանելն քո զայն մեղսն:

2. Արդեօք որպիսի ուրախութիւն լինա

նի

նի սիրտ քո. եթէ խոստովանիցիս զայն: Զի փաղփաղակի լուիցես հանդչիլ խղճի մտաց քոց: Եւ զգասցես թեթևանալ յայնմանէ բեռանէ. որ այժմ տառապէ զսիրտ քո:

3. Լուր՝ բժիշկքն հեռացեալ են 'ի քէն. զկնի դոյզն ժամանակաց մեռանիս: Եւ եթէ մեռանիս այդու կերպիւ. միթէ ոչ դատապարտիս յաւիտեան:

4. Եւ վա՜յ դու դաղես զայն՝ զի ոչ ծանիցի: եթէ այժմ ամաչես ասել զայն մարդոյ ուրուք. յաւուրն դատաստանի ճանաչելոց է՛ և յայտնելոց ամենայն աշխարհի հանդերձ մեծ ամօթով և նախատանօք քո:

5. Եթէ հակառակիս 'ի ասել զայն ինձ. կամ աւագ քահանայի. ասա ո՞ւմ և կամիս. գտցուք քեզ զօտարական քահանայ ոմն. եթէ կամիս դու. բաւական է՛ միայն. զի դու խոստովանեսցիս:

Եթէ այսոքիկ պատճառք ոչ շարժեսցեն, ասա. զի յանձնիցէ ջերմաջերմն սիրով որդւոյն էճխտխոսի Աբրայլին. և դու ևս արա զնոյնն. և ջանա. զի այլք ևս արասցեն զնոյնն: Զի որպէս գրէ Յօհաննէս վէկայ Աբեղայն 'ի յիւրում գրքի. թէ այս արս ունի զմնացուանդուն 'ի

տնէ

տանէ առ 'ի ընդունիլ զշնորհս վասն այնո ցիկ . որք ամաչեն 'ի խոստովանիլ:

Դաւանութիւն մեռանելոյ [illegible] խղճահարութեան . որք պատրաստեն [illegible] [illegible] :

1. Որդեակ՝ զինչ է՛ այս : ուստի է՛ այս մեծ երկիւղս : առ ո՞ր գնալոց ես առ 'ի տալ զհաշիւն կենաց քոյ . թերևս առ բռնակալս ոմանս :

2. Մինթէ չես խոստովանեալ զամ մեղս քո : Մինթէ թողեր արդեն զմեղս ինչ կամաւորաբար : Մինթէ ոչ ցաւ է՛ քեզ մեծապէս յաղագս պատուիրանա զանցութեանցն : Զխարդ ուրեմն մտօք քո շրջիս , և տառապեցուցանես զքեզ 'ի խորհուրդս անօգուտս . և անզգամս:

3. Եւ եթէ նաև թողեալ իցես ասել զոմանս մեղս մոռացմամբ . կամ անզգուշութեամբ . մինթէ ոչ ցաւիս այժմ յամ սրտէ քումմէ : Մինթէ ոչ ապաշխարես սակս անհոգութեց քոց . ահա այս բաւական է՛:

Զինչ

4. Զինչ խորհիս՝ թերևս 'ի փրկել զքեզ քոյով զգուշութ̃բդ՝ մաքրելով զխղճմտան սրդ : Ծանիր՝ զի դու փրկիս միայն պարզ ողորմութ̃ն ա̃յ ։ Արկ զքեզ 'ի գիրկս նորա]. և անդ թագիր ։

5. Ինձ թուի. թէ այսու քոյ անհանգստութ̃բդ առնես մեծ անարգանս Յս̃ի Քս̃ի. երբ թէ է̃ քեզ ոչ իցէ սիրելի Հայր. այլ միայն խիստ դատաւոր. որ կամի քննել այնքան նրբաբար.

6. Դու կարծես. եթէ գնոյ է̃ քեզ այնքան նրբաբար. զիարդ ա̃ծ տարաւ վ̃ս անցելոց այնքան համբերութ̃բ. և ընկալաւ զքեզ զկնի ուղծ անդամ բարկացուցանելոյ քոյ զնա, այնքան սիրով : արդ է̃ է՞ր տարաբերեալ շրջիս ։

## ԵՐԲ ՀԻՒԱՆԴՆ ՀԱՄԱՌԱԿՈՐԵԱԼ ԻՑԷ ԱՌ 'Ի ՈՉ ԽՈՍՏՈՎԱՆԻԼ Ե ՈՉ ԿԱՄԻԼ ԱՌԱՋ ԽԱՌԵԼ:

1. Ոչ կամիս խոստովանիլ: Բայց վասն է՞ր: միթէ չես քրիստոնեայ. միթէ ոչ արդիւնաւորի Յս Քս. զի դու արասցես զայս պատիւս առ 'ի ճանաչել զնա ա՛ծ քո հնազանդ գոլով այնմիկ, զոր նա հրամայէ: Նա կամի. զի դու խոստովանեսցես. և ապաշխարեսցիս:

2. Ո՞վ ողորմելի, միթէ ունի կարօտութի՞ն ինչ Յս Քս զքէն: եթէ դու խոստովանեսցիս, քեզ բարի լինիցի, քան թէ նորա:

3. Լուր, ցաւ քո անբժշկելի է՛. կամ խոստովանեսցես. կամ ոչ. դու մեռանելոց ես. խորհեաց ուրեմն. եթէ բարւոք թուիցի քեզ կամակորեալ մնալ:

4. Ո՛վ ողորմելի. եթէ դու թողուս 'ի խոստովանիլ. զրկիցիս նաև յամ այլոց խորհրդոց: արկանիցիս արտաքս քան

զմ̃բ տեղիս. և Թաղեսցիս 'ի յաղքանոցս. և տակաւին կամիս կամակորիլ:

5։ Արի. զօրացիր որդեակ իմ. արա զոր ասեմս: Հայեաց աստէն 'ի Յս̃ Քս̃ տափէն ցուցանի խաչելութին որ բացեալ բազկաւ. սպասէ քեզ. առ 'ի գիրկս արկանել զքեզ:

Եթէ հիւանդն փորձեալ իցէ 'ի անաժամուէ. տաչս բարի գործոյն:

1. Օ ինչ յիմարութի՛ է այս, զոր ունիս 'ի գլխի քում: դոհացիր զՏ̃նէ. որ ետ քեզ զշնորհս իւր: զՏ̃ն չարեւս նոխա, որ զօրացոյցն զիս:

2. Մինթէ դու արարեր այնքան վասն Յսի Քսի. որպէս արար Նա վասն քո: Որովհետև եթէ դու գործեցեր զոմանս իրս վասն նբ. արարեր զգ̃ծ արդարութե. յիշելով զերախտիսն, առ որ պարտաւորն էիր:

3. Զգոյշ լեր որդեակ. և մի՛ անսար այդմ. քանզի դիւրաբար կարես դապս

պար

պարտիլ. և կորուսանել զնմ արդիւնսն,
և զվարձսն. զոր առաջարին:

4. Ով գիտէ. եթէ մինն 'ի յայնց գոր-
ծոց զորովք դու պարծիս. իցէ հաճոյ այ:
Ոչ գիտեմք, եթէ իցեմք 'ի շնորհս.
կամ 'ի մեղս առաջի այ:

5. Արդ՝ աղէ ասա ցՏր. Մի՛ ինձ Տր
զշնորհս. այլ քեզ: խոստովանիմ. զի զնմ
զայն՝ զոր արարի 'ի բարի. քո է՛: քանզի
դու ինձ ազդեցեր. և դու ինձ օգնեցեր
առնել ինձ: Մի՛ մեզ Տր. մի՛ մեզ. այլ
անուան քում տուր զփառս:

## Երբ հիւանդն հոգեվար՝ ունիցի յոյս առողջանալոյ:

1. Որդեակ՝ ես տեսանեմ. զի դու միշտ
պակասես. սակայն ոչ թուի ինձ.
զի այս յոյսն քո ունիցի հիմն առողջա-
նալոյ:

2. Հաւատա՛ ինձ. զի դեռ դնէ 'ի միտս
քո վերստին ունել զառողջութիւն. որպէս
զի դու ոչ համեմատեսցիս կամաց Տն:

3. Արա զոր ասեմս: համեմատեա՛ դու

զքեզ է ածային կամաց . և արա զայն՝ զոր առնես . իբր եթէ մեռանելոց իցես քանզի նաև եթէ յուսահատիս ՚ի յառողջանալ . այնքան որն տացէ քեզ զառողջութի՛ . եթէ կամքն իւր լինիցի շնորհել:

Զայսոսիկ պատճառս զորս համառօտաբար բերի . պատկանի քեզ երկարացուցանել . որպէս զի առաւել զօրասցին : Քանզի ես միայն բերի քեզ զշարժմունսըն . որովք կարես համոզմամբ յորդորել զհիւանդն :

## Բանք յորդորականք՝, յիշեցուցանելիք երբեմն երբեմն հիւանդին ։

### Յաղագս համբերութեան ։

1 Յօժար սրտիւ կրեաց որդեակ, զոր
տ̃րն քեզ առաքէ · քանզի նա բա
զում կրեաց կանխաւ վասն մեր ։
2 Որդեակ՝ յիշեա · զի ժամ մի կրելն
'ի կեանս յայս · հաւասար է՛ տարւոյ միոյ
'ի քաւարանին ։
3 Լուր · րոպէ ինչ կրելն · դառնա
լոց է՛ 'ի յաւիտենական զուարճութիւն ։

## Յաղագս յուսադրութեան:

4. Քաջալերեալ լեր. եւ գիտասցես. զի անհուն ողորմութիւն այ գերազանցէ անհնապէս քան զամենայն մեղս քո. եթէ մեծք իցեն մեղք քո. սակայն ողորմութիւն այ է' միշտ մեծագոյն: Մեծ է' ողորմութիւն նր. քան զանօրէնութիւնս ձեր: Եւ է' մասն հաւատոյ. առաւել կարօղ է' ած ներել. քան եթէ մեզ մեղանչել:

5. Եւ այնքան մեծ ողորմութիւն նն. զի կայ եւ մնայ հանապազ բացեալ բաղկօք առ 'ի ընդունիլ զքեզ որպէս որդի' 'ի պաշտելի գոգ իւր: եւ ոչ զայլ ինչ խնդրէ 'ի քէն. եթէ ոչ զսիրտ' զղջացեալ եւ խոնարհ: Ասէ քեզ Հայրն քո գթած եւ ամենասիրելի. որդեակ' տուր ինձ զսիրտ քո:

6. Նաեւ յուսա յարդիւնս չարչարանացն, եւ ամենափրկարար Արեանն Յսի Քսի. որք են այնքան մեծք, որ միայն կաթիլ մի' այնմիկ. անհունաբար արժէ. եւ բաւական է' բառնալոյ զբիծս անթիւ աշխարհաց. եթէ գտանիցեն: արդ' զօ

րա

բացիր · զարթիր · զի վճարումն Յսի Քսի անհունաբար մեծ է՛ · քանզի վշտացուցմունքն · զոր արարեր դու ա̃յ :

## Յաղագս յուսադրութեան առ ամենօրհնեալ կոյսն :

7. Յիշեա · զի ամենամբ կոյսն է՛ ապաստան մեղաւորաց · յանձնեա դու զանձն քո նմա · որ ը̃ հովանեաւ իւրով պահպանեսցէ զքեզ · առ 'ի չատագովել զքեզ ի յարդարութէն ա̃յ · և 'ի յուզմանէ դժոխոց :

8. Որդեակ · Մարիամ Ածածին է՛ մայր ողորմութեն · և փաստաբան առաջի Աթոռոյն ա̃յ · և գիտասցես · զի ոչ բարձի թողի առնէ երբէք · որ առ նա դիմէ : Կոչեա ուրեմն զնա · և դիր զա̃մ յոյս քո · 'ի Յս̃ · և 'ի Մարիամ Ածածին · Միայն յոյս իմ Յս̃ , և զկնի Յսի · Կոյս Մարիամ :

9. Որդեակ կամիմ · զի արասցես ընծայ՝ զսիրտ քո առ Յս̃ · և առ կոյսն Մարիամ: մատո զկէսն առ Յս̃ · և զմիւս կէսն առ կոյսն Մարիամ · և ասա այս

 պէս ·

պէս . Յս և Մարիամ . ձեզ ընծայեմ զսիրտ և զհոգի իմ . ձեզ յանձնեալ թողում զսիրտ և զհոգի իմ :

## Յաղագս յուսադրութեան առ պահապան Հրեշտակն :

1. Մի՛ երկնչիր . ունիս օգնական զպահապան հրեշտակն քո . ամենևին պատրաստ 'ի պաշտպանել զքեզ 'ի թշնամւոյն . որ վերջին կարողութ խուռով ջանայ 'ի յաղթել զքեզ : Արդ՝ ասա ցհրեշտակն քո պահապան , կենդանի հաւատով : ո՜վ Պահապան հրեշտակ պաշտպանեա զիս 'ի յայսմիկ պատերազմի . զի մի՛ կորայց 'ի յահեղ դատաստանին :

2. Որդեակ՝ ունիս զառհաւատչեայն 'ի ձեռին . առ 'ի ապաւինիլ 'ի պահապան հրեշտակն քո : ոչ ամենևին բարձի թողի արար 'ի յընթացս կենաց քոց : և յորժամ մեղանչէիր մահացօրէն . յայնժամ զիւր զօրութիւն կրկնէր : զի մի՛ 'ի դժոխս անկցիս . և այժմ երկնչիս , թէ թողցէ զքեզ :

3. Ծանիր հաւատապէս. զի 'ի յայս մեկ վերջին պատերազմի, նա ինքն լիցի պաշտպան բարեխօս. և փաստաբան քեզ: որպէս զի յաղթեալ թշնամւոյն, հասցես 'ի յերջանիկ յաղթութեն այսմիկ վերջնոյս: Այո, Հրեշտակ Այ. որ ես պաշտպան իմ. զիս քոյին վերնական գթութեն յանձնեմ այսօր. և 'ի ժամու մահուան իմոյ. լուսաւորեա. պահպանեա. ուղղեա. և կառավարեա: ամէն:

## Յաղագս յուսադրութե 'ի Սուրբս:

13. Մի՛ երկնչիր. սր̃ն քո՝ զորոյ զանունն ունիս. և ա̃մ բարեխօսք քոյ պատրաստ են վասն քոյ: Յուսա 'ի պաշտպանութեն նց̃. զի ա̃մքն գթացեալ ողորմին կացութեն և հիւանդութեն քում:

14. Որդեակ. բարեխօսք մ̃ր քո. և գլխաւորաբար ամ̃նօհնեալ կոյսն, սպասեն քեզ՝ որ դնաս յաշխարհէս յայսմանէ. առ 'ի յանդիման ելանել քեզ. և դիրկս արկեալ զքեւ. տանել ը̃ն իւրեանս 'ի յերկինս:

## Յաղագս համբերութեան:

15. Եթէ տէրն կամի քեզ տալ զմահ. համեմատեա զքեզ ամենայնիւ կամաց նր. եւ ընկալ զայն համբերութ 'ի պատիժ անցեալ մեղաց քոց:

16. Լուր. ցաւքն կենացս այսորիկ, կրեալք համբերութ. կարճացուցանեն զխստութիւն պատժոցն քաւարանին: Աղ- աղա ամ զօրութ սրտի քոյ առ ամենազօրն Յս. Տէր, կիզեա. աստ կտրեա. մի՛ թողցես 'ի կեանսն. բայց թէ ներեսցես 'ի յաւիտենականութեն: Աստ այ րեայ. աստ հատեա. զի 'ի յաւիտեան նե րեսցես:

Ուր եղեալ է՝ որդեակ դու պարտիս փո փոխել ըստ որպիսութեն անձանց: Եւ կա րես կոչել զհիւանդն. կամ յատուկ անու ամբ կամ այլով կերպիւ. ըստ որում խոհեմութեն քում պատկան վարկանի:

Ներ

Ներգործութիւնք զանազան առաքինութեանց յիշեցուցանելիք երբեմն երբեմն հիւանդին. կամ առնելի 'ի նմանէ, եթէ կարէ.

Ակտն հաւատոյ :

1. ՏՐ. հաւատամ հաստատապէս զայն ամ, զոր դու ուսուցեր եկեղեցւոյ քոյ. և պատրաստ եմ առ 'ի տալ զկեանս վասն հաստատութեան այնպիսի ճշմարտութեանն. զոր դու յայտնեցեր. և ես հաւատացի :

2. Գոհանամ զքէն վասն բարերարուեցդ արարելոց առ իս՝ ծնանելովդ իմ 'ի գոգ եկեղեցւոյ քոյ. և պարծանք մեծ է՛ ինձ 'ի մեռանիլ ուղղափառ :

3. Մատուցանէի որ հազար կեանս սակս այսմիկ հաւատոյ քոյ սբյ : իսկ միայն ցաւ է՝ ինձ ոչ գործելն եմ առընդունելութեան այնքան շնորհացն. զոր դու ինձ արարեր :

4. Յանձնեմ 'ի անհուն սէր քո՝ առ

'ի

'ի փրկել զիս․ և յուսամ հաստատապէս․
քանզի ողորմութիւն քո անհուն է՛ և ան
չափ։

5․ Տէր, յուսամ'ի քեզ․ և'ի քէն յու
սամ զյաւիտենական փրկութիւն։ Կոչեցեր
զիս 'ի հաւատքո․ արդարացուցեր մր̄
խորհրդովք․ ուրեմն նաև զիս փառաւո
րեսցես։ զըզմ՛ առհաւատչեայս ունիմ սի
րոյ քում։

6․ Տէր իմ․ ես գիտեմ․ զի դու ես
Հայր գթած, արդ՝ յուսամ հաստատութ̄․
թէ զիս արասցես մասնակից, որպէս
որդի՝ քոյոյ անհուն ողորմութե̄։

7․ Ո՛չ լինիմ անյոյս յաւիտեան զսիրոյ
քումմէ։ և եթէ դևք փորձեսցեն զիս 'ի
կէտ մահուան՝ յուսահատութբ̄․ յաւի_
տեան ոչ լսեմ նոցա։

8․ Խոստովանիմ տր̄ իմ․ զի մեղք իմ բզմ՛
են յոյժ․ և մեծ ք։ սակայն հաւատեաւ դի
տեմ․ զի ողորմութիւն քո է՛ անհնապէս
մեծ։ և վս̄յ յուսամ․ և կամիմ յուսալ'ի
փրկութե̄ իմոյ անձին։

9․ Յուսամ տր̄ իմ'ի յողորմութիւն քո։
ամենայն դևք ոչ կարեն հանել'ի սրտէս՝
զայս յոյս։ Յուսամ կենդանութիւն․ զի
յաւիտեան երգեցից զողորմութիւն քո։

Յա

## Յաղագս սիրոյ և ողջման:

10. Տէ՛ր իմ. ած իմ. ցաւիմ վասն բար
կացուցանելոյ իմ զքեզ. զղջամ
մեծապէս. և առաւել ցաւ է՛ ինձ. քան
զի ոչ կարեմ ըստ արժանւոյն ցաւիլ վասն
այնքան չարեաց. զօրս ես արարի քեզ.
և ընդդէմ քեզ:
11. Ո՛հ. որ իմ, զի՛արդ աներջանիկ
էր ժամանակն այն, յորս զքեզ ոչ սիրէի:
Որպիսի ապերջան էր բոպէն այն՝ յորում
զքեզ զայրացուցի: Ատեմ. և անարգեմ
զայն յամ սրտէ:
12. Ողորմեա՛ որ այսմիկ տնանկ մե֊
ղաւորիս: դու ը իս վարէիր գթութ.
յորժամ ես զքեզ զայրացուցանէի: շնոր
հեա՛ զթողութ. այժմ որ կոծեմ:
13. Ջիարդ համարձակեցայց երեւիլ
առաջի քոյ Ած իմ. լցեալ այնքան զազ
րութ: Մեղայ ընդդէմ բարութե քոյ:
զոր պարտն իսկ էի անհնապէս սիրել:
Խոստովանիմ. զի ես գտայ ապերախտա
գոյն.

գոյն • այժմ խոնարհաբար խնդրեմ զնե-
րումն :

14. Ցաւ մեծ է՛ ինձ սակս զայրացուցանելոյս զքեզ • ոչ վասն երկիւղի կորուսանելոյ զարքայութիւն • և դատապարտելոյ 'ի դժոխս • այլ միայն սակս վշտացուցանելոյ զանհուն բարութիւն քո :

15. Ահա տէր ես եմ այն եղեռնագործն • այն ապերախտն • որ համարձակեցայ բարկացուցանել զքեզ • ընծայեմ զա՛մ ցաւս իմ • զոր այժմ կրեմ • և ես զմս հու յօժարութե՛ գիրկս արկանեմ 'ի նշան ցաւոյ իմոյ :

Յաղագս համաչէրդութե :

16. Ահա տէր • ես հատուցանեմ քեզ զայն, զոր պարտիմ զայս հոգիս • զոր դու արարեր քոյով խնամօտութե • զոր դու գնեցեր քոյով արեամբ • Ահա 'ի պատրաստի է՛ • եղիցի բոլորն քո :

17. Յօժարութե՛ հնազանդիմ այնմ վճռոյն • զոր դու արտաբերես 'ի վերայ իմ : որքանիցս դատապարտեսցես զիս 'ի պատիժս խիստս • որք տևեսցեն մինչև

'ի

'ի վաղճան աշխարհի · յօժար սրտիւ ըն
դունիմ ։ Զի եթէ ես ոչ դիտացի պա
տուել հնազանդութե · արդար է՛ յոյժ ·
զի պատուեցից պատժօք ։

18. Տէր, ես կրեմ յոյժ · բայց ոչ կրեմ
այնքան, որոյ արժանի եմ 'ի կրել · տէր,
յաւել ինձ զցաւս իմ · բայց համանգա
մայն յաւել եւ զհամբերութիւն ·

19. Ցո՛ իմ · կամիմ կրել աւելի քան
զայն · զոր այժմ կրեմ · եւ կամիմ մեռա
նիլ, եթէ ընաւն քեզ հաճոյ է՛ ։

20. Ով տր իմ · եթէ ես գիտէիցէի · զի
աղաչելով զքեզ · իսկոյն ինձ շնորհէիր
զառողջութիւն · ոչ կամէի խնդրել զայն ·
յորժամ գիտէիցէի, զի ոչ էր կամք քո ։

Դէպ առ ամենօրհնեալ կոյսն Մարիամ ։

21. Ով ամենօրհնեալ կոյս · այժմ է՛
ժամն ցուցանելոյ զքեզ դոլ Մայր
բարի ։ Աղաչեմ զքեզ ընկալ զորդի քո ·
թէպէտ ամենանարժան այնպիսի ձայնի
կոչման ։

22. Կոյս ամենաերջանիկ · ահա ժամն ·
յորում պարտիմ մատուցել վասն յաւիտե
նակա

նականութե̃ն ։ օգնեա՛ ինձ ՚ի յայսմիկ որո գայթաւոր րոպէի ։

23. Մարիամ Մայր շնորհաց . և ո-ղորմութե̃ . պաշտպանեա՛ զիս ընդդէմ թշնամեաց իմոց ։ ապաւինական լեր ՚ի ժամու մահուան իմոյ ։ Արա ո՛վ տիրուհի . զի ՚ի մէջ բազկաց քոց ես վճարեցից զհոգի իմ ։

24. Ո՛վ ամենահզօր կոյս, մի՛ թողուր զիս . զկնի ա̃յ զա̃մ զյոյս իմ, իմոյս փրկութե̃, եղեալ եմ ՚ի քեզ ։

25. Կոյս ամենասիրելի, մինչև ցայսօր զբազում մեղաւորս փրկեցեր . որք յուսացան ՚ի քեզ ։ փրկեա և զիս . որ եմ մեծ քան զբնաւսն ։

## Առ Յիսուս ։

26. Տէր իմ, թէ չեմ արժանի գթու-թե̃ քոյ . ինձ օգնեսցէ արդիւնք չարչարանաց քոց . և անպատմելի բա-րեխօսութի̃ ամենաս̃ր Մօր քոյ ։

27. Յ̃ս իմ, մեղայ ։ այլ սակայն միշտ և համապազ խոստովանեցայ զհրաշալի Անուն քո . և մինչ այժմ թողուս . զոր

զոր ես հայհոյեցից յաւիտեան . Ո՞վ սի
րելի տէր իմ, փրկեա զիս:

28. Ո՞վ տէր իմ, օգնեա ինձ . մի՛ թող
ցես զի դեւն յառաջեսցէ ներգործել զզօ
րուն չարուն իւրոյ 'ի յիս . այլ միայն քոյդ-
ողորմութեն:

29. Յ͞ս իմ, արձակեա զիս 'ի բանտէ
այսմիկ մարմնոյ . որպէս զի կարող եղէց
զմայլել զքեզ 'ի յաւիտեան : միայն զքեզ
խնդրեմ : առ քեզ դիմեմ . քեզ միայն
ցանկացեալ փափաքիմ:

30. Տէր իմ, չեմ արժանի . և է՛ ճշ͞մ .
սակայն նաև ընդունակ եմ օգնութե քոյ :
զմեղս արարի : պատժեա զայնս այժմ
այսուքիւք ցաւօք ժամանակաւորօք . բայց
ոչ յաւիտենականօք :

Զայսոսիկ և զնման ներգործուէս պար
տիս յիշեցուցանել հիւանդի քոյ . սա
կայն ոչ 'ի միում անգամ . այլ երբեմն
երբեմն : Կարճառօտս յառաջադրեցի
քեզ . որպէս զի մի՛ ձանձրութ լիցի հի
ւանդին : և սակաւս եդի առաջի . որ
պէս զի դու ջանասցես դնել 'ի յիշողութ
քում . յ͞ս . գոնեա զնմանցուածս այսոցիկ :
Զի ես յոյժ փափաքէի . զի այսոքիկ 'ի

սրտէ քումմէ բղխեալ յառաջեսցին . և
ոչ արդէն . զի համառօտապէս ասիցես .
կամ ընթեռնուցուս :

## Կերպ պատրաստելոյ զհիւանդն առ 'ի ընդունել արժանապէս զ° դաւան խորհրդոյ արձակման :

Յորժամ հիւանդն խոստովանի առ 'ի ընդունել զամենասուրբ Թոշակն՝ զոր դու լուար իմ սիրով . զկնի ասասցես նմա զայս :

Քահանայն .

Որդի՝ լուր ։ կարէ գոլ այս վերջին անգամն . որ խոստովանեցար . կամիմ . զի դու այժմ արասցես զներգործումն զղջման . բայց այնու կերպիւ . զի կարիցես հաւատալ 'ի յաւիտեան զքոյդ փրկութի : Ծանիր . զի եթէ այժմ կոծեսցես ճշմ սրտիւ զամենայն պատուիրանաց զանցութիւնս քո . ճշմարտապէս Տրն ներեսցէ քեզ զմեղս քո . և մեռանելով . քոյդ ընկալցի

կալցի զքեզ 'ի գոգ իւրոյ ողորմութեն ։ Ջայն՝ զոր ես արտաբերեցից ձայնիւ · դու ասասցես սրտիւդ ։ այս անուան յիշեա · զի Թերեւս իցէ վերջին ներգործութեն զղջման ։

## Ներգործութիւն զղջման ։

Հայր ողորմութեն · ահա 'ի մահճի միում հասեալ է 'ի եզրն նա · որ այնքանիցս մատնեաց զքեզ · պակասելով 'ի հաւատոյ · և 'ի բանից ։ ապաքէն Տէր ինչ չէր տա · զի հիւանդն Էարսոց 'ի Տէր տացէ · տէ՛ր ես զղջամ · ցաւիմ · 'ի սրտմուե մեծի Թախծեալ մորմոքիմ սակս բազում անգամ վշտացուցանելոյ իմում զքեզ ։ և մեծապէս ցաւ է՝ սրտի իմոյ միայն · զի արժան իսկ էր ծառայել քեզ · և սիրել ի վեր քան զամենայն իրս ։ Անագան ծանեայ զքեզ ո՛վ բարութե անհուն · սակայն ընկալ զիս զմեղաւորս 'ի վերայ այսմ · որովհետև 'ի վերջնումն ընկալար զաւազակն Է քեզ խաչեալ ։ Ջամն · որ մինչև ցայժմ կրեցի 'ի յայսմիկ հիւանդութե իմում · և զայն · զոր կրեցից մինչև ցվերջին շունչն իմ · մանաւանդ և ս

զմեռանիլն. իմանամ. և կամիմ քաջապէս կրել զայն, և ընդունիլ 'ի վրէժխնդրութեն անիրաւութեան. զոր արարի ընդդէմ քեզ: Տէ՛ր իմ. ընկալ զվիշտս իմ զայս զոր ըղձամ 'ի յայտնել զայն քաջութ՟ սրտի իմոյ: և իմանամ ունիլ զհաստատ յառաջադրութեն ոչ ևս բարկացուցանել զքեզ. զի 'ի յայսմիկ հիւանդութեան սիրով գիրկս արկանեմ զմահուանէ. առ 'ի ոչ ևս մեղանչել:

Եւ յետոյ ասասցէս:

Զայսուսիկ բանս՝ զորս քեզ բացայայտեցի. մինչ ոչ իմացար նաև դու, ընդունելով զայն հաստատ սրտիւ:

Ա՛ Հայր մեր:

Ուրեմն խնդրես զարձակումն յամենայն բանադրանաց. յամենայն յընթացից նզովից. կամ յորս գլորեալ իցես. և յամենայն մեղաց՝ զորս արարեր. մինչ ոչ է՛ այսպէս. Ա՛ Հայր մեր:

Ընկալ ուրեմն ամենայն ջերմեռանդութ՟ զարձակումն մ՟ր. զոր տամ քեզ կենդանի սիրովն սրտի իմոյ. և մինչև ուր արձակի. և կարէ արձակել քահանայական իշխանութեն:

Ողոր

Ողորմեսցի քեզ մարդասէրն ած ։

Զկնի արձակման ասասցես ։

Արդ՝ զօրացիր . և պահեա՛ զՔը յառաջադրութենէն . և մի՛ երկնչիր . զի Տրն ետ քեզ մինչև ցայժմ զառհաւատչեայն փրկութեն ։

Վերայ նախապատրաստելոյ զհիւանդն առ ամենասբ հաղորդութեն ։

Յորժամ օգնես հիւանդին առ ՚ի բարւոք ընդունելոյ զխորհուրդն ապաշխարութեն պարտ է՛ քեզ հաւասար կերպիւ հոգալ, զի պարկանաւոր տրամադրութբ ընդունիցի զամենասբ հաղորդութիւն ։ քանզի ողորմելի անզօրացեալն ՚ի տկարութե . սակաւ . կամ ոչինչ զմտաւ ածէ , բայց ՚ի յայնմանէ զոր կրէ ։ Ուրեմն յորժամ մերձենայ քահանայն ընդ ամենսբ հաղորդութե կամ թերևս՛ դու իցես բերող .

Նախ քան զըներելն զայս ա՟ծային հացս՝ ասասցես նմա :

## Յորդորումն :

Գիտե՞ս ո՞վ որդեակ. կամ ես. այս ա_նուն. թէ ո՞վ գայ առ քեզ : Այժմ աստ գայ առ քեզ Յ՟ս Ք՟ս. նոյն ինքն. որ զքեզ դատելոց է՝. և նոյն ինքն. յոր մէ կախի վճիռն յաւիտենական բարւոյն, կամ յաւիտենական պատժոյն : Արդ՝ կամիմ. զի դու պատրաստեսցես զքեզ այնու կերպիւ. զի կարիցես առնել զնա բարեկամ՝ 'ի կեանս քո. առ 'ի գտանել զնա քաղցր դատաւոր 'ի մահուան քո. Սակայն կամիմ. զի ես յանուն քո արարից զնախապատրաստութիւն. եւ բաւական է՝ ինձ. զի դու ասասցես 'ի սրտի քում : Ա՞ռ Հայր. արդ՝ մտադիր լեր. և ասա սրտիւդ :

## Աղօթք :

Տէ՛ր իմ. փրկիչ իմ. և դատաւոր իմ. դու կամի՞ս այժմ արժանաւոր առնել այցարարութեան մինչև 'ի մահիճս միոյ աղքատ մեղաւորի : Եւ զիարդ կամիս

առ

առնել զայս ո՜վ անչափդ ա՜ծ խոնարհիլ. և գալ առ ո՜ն զազիր որդն երկրի. և միանել 'ի հոտեալ սիրտ մի', որպիսի է' իմ: Տէ՛ր չեմ արժանի. քանզի դու ես նոյն ինքն սրբութի՟ն. և ես անօթ իմն փտեալ անօրէնութե՟: Ես այն եմ. որ այնքան անգամ զքեզ բարկացուցի. թէպէտ բարութք գիտէի. զի դու ես անհնապէս բարի. անհնապէս սիրելի. անհնապէս արժանի պատկառանաց՝ զոր պարտին ունիլ քոյդ ստեղծուածք: Եղիարդ ուրեմն կամիս գալ 'ի տուն հոգւոյ միում, որ այնչափ քեզ մատնիչ եղև: իսկ եթէ յետոյ է հաստատ կամք քո առնել զպարգևս մեծ. աղա սիրտ իմ. առնեմ պարգև իմն անդառնալի. բայց մաքրեա՛ զայն. սրբեա դու. և արա՛ արժանի յարմար օթարան այնպիսի մեծի փառաց. որպէս ես դու Տէ՛ր իմ. և Ա՜ծ իմ. որոյդ եղիցի գովութի. և օրհներգութի յաւիտեանս յաւիտենից: ամէն:

Քահանայն:

Յանձնարարացուք ևս առ ամենօրհնեալ կոյսն. որ ընկալցի շնորհս առ 'ի կարել ընդունիլ արժանապէս զիւր ա՜ծորդին:

## Աղօթք։

Այս ամենամբք · ած որդւոյն քո կամի առնել զայս մեծ անչափութե ողորմութե գալ առ 'ի այց առնել ինձ։ Ո՜վ Մայր ամենագթութ · մի՛ բարձի թողի առներ զիս · պաշտպանեա՛ զիս · ընկերակից եւ լեր դու այսմիկ ածայնն հիւրին մինչեւ 'ի ներքս սրտի իմոյ։ Եւ եթէ ես չեմ արժանի աղաչել զնա · աղաչեա՛ դու ընդ իմ զնա ։ որ շնորհեսցէ ինձ զայնքան շնորհ առ 'ի կարել ընդունիլ արժանապէս գոնեա զնա այսմիկ վերջին անգամին · որպէս զի նա իցէ ինձ առաջնորդ · եւ յորդորիչ · առ 'ի աւարտիլ հաւաստութ այսմիկ երկար ճանապարհի · որ մնայ ինձ · եւ զի աւարտեսցի 'ի յաւիտենականութեն ։

Յորժամ մերձեսցի ամենամբք թոշակն · կամ զկնի մտանելոյն 'ի յօթեւանն, կրկնեա վերստին զայս ։

## Ներգործուէ̄ դէփասորուէ̄ ։

Ո հաւատալիք որդեակ տէրն․ արդ՝ զօրացիր
ասա յամենայն սրտէ քումմէ ։
Տէր․ ահաւասիկ ես աստ․ որ հաւաս-
տեալ 'ի քոյոյ մեծէ սիրոյ, սպասեմ ըն-
դունել զքեզ․ և աւաղ ինձ սակս ոչ ունե-
լոյ զմաքրութի̄ն հրեշտակաց․ և զսէրն սե-
րովբէից ։ Կամէի յայսմիկ րոպէի ունիլ
զջերմութի̄ այնպիսի մեծ դէպ 'ի քեզ․ զի
առ 'ի ընդունելոյ զքեզ․ հեղձցի սիրոյ իմ սի-
րով քով ։ Անարգեմ․ զզուիմ յամենայն մե-
ղաց իմոց․ և ըղձամ ունիլ զայն ցաւն․
և զզղջումն․ զոր դու ունէիր ընդդէմ
ամենայն մեղաց աշխարհի․ յորժամ կիսա-
մեռ էիր 'ի պարտէզն գեթսեմանի․ ըն-
կալ զայս ցաւս իմ․ զոր այժմ կրեմ 'ի
պատիժ իմոց մեղանաց․ զորս ընդդէմ
քոյ արարի․ և 'ի կոչումն իմոյ սէ-
րամարդութե̄․ որով եմ առ 'ի ընդունել
զքեզ ։

Ժամանեալ քահանային 'ի յօթեւանն հի-
ւանդին․ կամ եթէ դու իցես աւագ-
քհ̄նյն․

քհնյն . դուն գործեա . զի հիւանդն խնդրեսցէ զներումն 'ի յընտանեաց և 'ի մերձակայից սակս ամենայն վատթար օրինակաց . եթէ տուեալ իցէ . և համանդամայն աղաչեսցէ ասել ն͠ց զհայր մեր մի . և զողջոյն քեզ մարիամն . առ 'ի արժանի լինիլ ընդունիլ զա͞ծայինն խորհուրդն ։ Եւ եթէ նա ոչ կարասցէ խօսիլ . արասցես զայն յանուն նորա ։ և ջանա միշտ նախ քան զկորուսանելն հիւանդին զզգայութիւնն . զի զայնս յառաջին արասցէ ։ Այս է՛ . զի եթէ պատրաստ է՛ առ 'ի առնել զայս ներգործութիւն խոնարհութե և յայնժամ որ ոչ կարասցէ խօսիլ . եթէ նա հաճեսցի . դու արասցես յանուն նր ։ Եւ եթէ ասէ նա . այո . դու յայնժամ յանուն նր զայն արասցես ։

## Զկնի առնմանն հաղորդութեան.

### Փոխանայն.

Յիշեա որդեակ. կամ. այժ անձն զշնորհս մեծս. զոր արար քեզ Տէր: Եկեալ է 'ի ներքս 'ի քեզ առ 'ի զօրացուցանել զքեզ ընդդէմ պաշարման թշնամւոյն. և առ 'ի տալ քեզ զառհաւատչեայն յաւիտենական երջանկութեան: Մանաւանդ տանիլ զքեզ ընդ իւր ինքն 'ի յարքայութիւն: Արդ՝ գոհացիր զնմանէ կենդանի սիրով սրտի քոյ:

### Շնորհակալութիւն:

Ո՛ Տէր իմ. [illegible]. Ո կեանք հոգւոյ իմոյ. դու եկիր առիս. առ 'ի տալ զառհաւատչեայն փրկութեան իմոյ: և առ 'ի առնել զիս ընդ քեզ ինքն 'ի յարքայութեան:

Ամենասիրելի տէր իմ. գոհանամ զքէն. և ընդ շնորհակալութեան՝ ընծայեմ զամենայն ցաւս իմ. և կամիմ մեռանիլ վասն քո:

Արդ՝ զի ունիմ զքեզ 'ի սրտի իմում. որ սրբէ զընաւսն: և կամէի ընդ իմում ընծայել զընաւսն:

Ամենասիրելի տէր իմ. գոհանամ զքէն. և ընդ շնորհակալութեան՝ ընծայեմ զամենայն ցաւս իմ. և կամիմ մեռանիլ վասն քո:

Կամէի ունիլ զսիրտ քո. և զսէր քո. ո՛չ զի առաւել հաճոյ լիցի քեզ այս իմ ընծայումս:

* Ամենասիրելի տէր իմ. գոհանամ զքէն. և ընդ շնորհակալութեան՝ ընծայեմ զամենայն ցաւս իմ. և կամիմ մեռանիլ վասն քո:

## Հայցուածք:

Այո տէր իմ. կամիմ մեռանիլ. եթէ քեզ հաճոյ իցէ ընկալ զհոգի իմ. և ած ընդ քեզ 'ի ձմհ:

Զքեզ առնեմ ժառանգ հոգւոյ իմում ամենայն կարողութեամբ իւրով. մարմնոյս՝

ամ

տմ զգայութե՛ իւրով . Տէ՛ր իմ քաղցրահայեաց ընկալ դու զամենայն ժամանդութիւն . զոր ընծայեալ մատուցանեմ քեզ ։ և եթէ նաև ժամս ինչ . կամ աւուրս կամիս մնալ ինձ . շնորհեա՛ . զի ես միայն կեցից քև ։ և ընդ քեզ . զի 'ի կիտէս յայսմանէ . մինչև 'ի կէսն մահուան . ես ոչ ունեցայց զայլ խր՛հւդ . բայց 'ի քէն . և զփրկուէ՛ իմմէ ։ Արա ինձ շնորհս ո՛վ բարութի՛ իմ . զի 'ի բոպէի ներկայի ես մնացից այնպէս ապշեալ և մոռացեալ զամենայն իրան . զի այլ ևս ոչ խորհեցայց՝ ոչ զընչից . ոչ զազգականաց . ոչ զեկամուտից . ոչ զկնոջէ իմմէ . ոչ զորդւոց եթէ ընդունակ է . բայց մնացից այնպէս անզգայացեալ զիրաց աշխարհի . զի զոչինչ իրօք կարացից խորհիլ . եթէ ոչ գալ առ 'ի միաւորիլ ընդ քեզ յաւիտեանս յաւիտենից ։ ամէն ։

Քահանայն ։

Ասա ինձ սիրելի . մի՛թէ ոչ հաճեցար ընդ այս խորհուրդս ։ Միթէ ոչ հաստատես զայնս յամենայն սրտէ քումմէ ։ Այո Հայր ։

Արդ՝

Արդ՝ զօրացիր . կաց 'ի խաղաղութեան ընդ սրբազնագործեալ տեառն քո . և աղաչեմ զնա յամենայն անձնէ ։ զի ածցէ զքեզ ընդ իւր 'ի յարքայութիւն իւր ։

Եւ զայս աղօթեալ, թող զնա 'ի խաղաղութեան ։

Կերպ նախապատրաստելոյ զհիւանդն առ վերջին օծումն ։

Որդեակ . կամ այս անուն ։ մերն կամի առնել քեզ զկատարեալ շնորհս ։ զի ես կամիմ առնել մասնակից ամենայն մեր խորհրդոց . ևս որ հաւատչէին ճշմարիտ քրիստոնեայքն . և մերքն ։

Այս քահանայն . կամ եթէ դու իցես անօղն ասա պատրաստ է՛ առ 'ի շնորհաբաշխել զմեր խորհուրդն վերջին օծմանն ։ զի դու զօրացիս և քաջացիս ընդդէմ թշնամեաց . և սրբեսցիս յամենայն ներելի մեղանաց . զորս դու ոչ ճանաչես . կամ ոչինչ համարիս ։

Այս

Այս է՛ խորհուրդ իմն․ զի նաև տայ զառողջութիւն մարմնոյ․ յորժամ իցէ օգուտ ՚ի փրկութիւն հոգւոյն ։

Արդ՝ արդեօք կամիս և խնդրես ընդունիլ զայն․ Այո՛ Հայր ։ այլ սակայն ունեայցիր զմշտ հաւատ ՚ի յայսմիկ խորհրդոյս ։ առ ՚ի լինել մասնակից մեծապէս մեծագոյն զօրութեանց և գործողութեանց նորա․ Ցաւիս սակս ամենայն մեղաց քոց ներելեաց՝ զորս ես ոչ ճանաչեմ․ մինթէ չէ՛ այսպէս ։ Այո՛ Հայր ։

Զայս ասացեալ․ յարդարեսցես և պատրաստեսցես տեղի․ մինչև գայցէ որ խաղն ։ Եւ կարել զնոր արարողութեան․ զորոյ զձեւն և արարողութիւնն ՚ի վերջն գրդոյս գրեալ գտանես՝ յորդորեսցես․ զի շնորհական լիցի զտմնէ ։

Քահանայն ։

Քաջացիր որդեակ իմ․ հաւ այս անուն ։ ահա այժմ ունիս զզէնս ՚ի ձեռս քո առ ՚ի հզօրեղապէս պատերազմել․ մի՛ վհատիր․ մի՛ երկնչիր․ այլ

թէ

թէ աղաչեմ զքեզ . զի գոհասցիս զոնէ
սակս մեծի բարերարութեանն՝ զոր ընկա
լար :

Ասա : Տէր գոհանամ զքէն . զի արժա
նի արարեր զիս ամենայն սր. խորհրդոց .
և վերստին գոհանամ զքէն . քանզի մե
ռանիմ կնքովն ճշմարիտ որդւոյ սրբոյ
եկեղեցւոյ : Այժ արքայութիւն քո շնոր
հակալութեամբ մատուցեալ ընծայեսցէ վասն
իմ . համանգամայն աղաչելով 'ի փրկու
թեն իմ . որպէս զի և ես կարող եղէց
գոհանալ զքէն ընդ նմա ամենայն յաւի
տենիւ . ամէն :

Խոստմունք առնելիք՚ի հիւանդէն զկնի ընդունման հաղորդութեան : Եւ կամ յորժամ տեսանես զնա մերձ ՚ի մահ, նախքան զկորուսանելն զզգայութիւն. յորդորեսցես զնա առնել զայսոսիկ խոստմունս :

Նախ ասասցէ :

Որդեակ : տեսանի զի տէրն կամի քարշել զքեզ առ ինքն : և ահա ժամանակ է՛. զի դեւն եկեսցէ առ ՚ի փորձել զքեզ ՚ի վերջին կիտի քոյ : Սակայն ես կամիմ. զի այժմ. վասն այնմիկ ժամու. խոստմամբ յայտնեսցես տն զքոյդ դիտաւորութին. առ ՚ի ոչ յաւիտեան ուկնդիր լինիլ դաւաճանութեն նորա : միթէ ոչ է՛ այդպէս : այո՛ Հայր :

Արդ՝ զօրացիր . ես ՚ի քոյդ կողմանէ տասցից ցտէր զքոյդ վերջին կամսդ : Եւ եթէ դու ոչ կարիցես բերանովդ. բաւական է՛. զի հետեւեսցիս ինձ սրտիւդ :

ունկնդիր լինելով . և հաստատելով զայն
ամ . զոր ես ասացից :

## Յանուն Հօր՝ և Որդւոյ և Հոգւոյն սբյ :

Ես այս անուն . խոստանամ յամենայն սրտէ իմմէ առաջի քոյ Աճ իմ . Հայր . և Որդի : և Սբ Հոգի . և երկրպագանեմ . և խոստովանիմ զքեզ միայն և ճշմա ած իմ . և ընծայեմ առ ամենարդար դատաստան քոյ . առ 'ի ծանուցանել և յայտնել քեզ զվերջին կամն իմ .

Ուստի կոչեմ 'ի վկայս այսմիկ վերջին կամաց իմոց զամենասբ կոյսն . զփառաբանն մեղաւորաց . զպահապան հրեշտակն իմ . և զպաշտպան սիրելի բարեխօսս իմ . այս անուն է ամենայն սբց . և սրբուհեաց արքայութեն : և 'ի ներկայութեն նաև դիւացն այնոցիկ . որք գան 'ի փորձել զիս . և ամենայն դժոխոց . զի շփոթեալք խռովեսցին . լսելով զխոստութեն իմ սակս վերջին ժամու իմոյ :

Նախ՝

1. Նախ՝ խոստանամ քեզ Ած իմ. ըն-
դունիլ 'ի յամենայնէ ձեռաց քոց
զայս հիւանդութիւն : և զնոյն մահն . 'ի
վճարումն մեղանաց իմոց : և եթէ 'ի սաստ-
կութէ ցաւոց եմ տատացեալ իցեմ զբանս
ինչ անհամբերութեն : այժմ զղջացեալ
ցաւիմ վասն այնմիկ ժամու . զի ոչ կա-
միմ մեկուսանալ կէտիւ իւիք 'ի յամե-
նայնէ կամաց քոց :

2. Խոստանամ . զի որպէս յամենայն
ժամ հաստատապէս հաւատացեալ եմ
զայն : զոր հաւատայ . և հաւատայ մայր
մեր եկեղեցին ուղղափառ : այսպէս մին-
չև 'ի վերջին շունչն իմ կամիմ 'ի մեր հա-
ւատն հաստատապէս մեռանիլ . և գո-
հանամ զքէն Տր իմ . և Ած իմ յամե-
նայն սրտէ իմմէ վասն արարելոյն քոյ
ծնանիլ 'ի գոգ մրյ եկեղեցւոյ : քրիս-
տոնեայ եմ . և քրիստոնեայ կամիմ մե-
ռանիլ :

3. Խոստանամ Ած իմ . զի փրկութիւն
իմ է՝ 'ի ձեռին քո . զի միայն քեզ պատ-
կանի շնորհել զշնորհն երկայնմտութ .
վսյ հաստատապէս յուսամ 'ի քեզ . զի
փրկես զիս . զի դու ես Հայր անհնա-
պէս գթած : Եւ եթէ ներհակելով 'ի

վերջին կենաց իմոց փորձութիւնքն ․ ասիցեմ կամ առնիցեմ զիրս՝ որք հակառակս թուիցին յուսադրութեան ․ զոր այժմ ունիմ ՚ի քոյդ ողորմութենէ։ Եւ այժմուս վ̄ժամուն այնորիկ ոչ լսեմ․ և ոչ անսամ․ զի յառաջեացէ ՚ի սրտէս ․ այլ զզուումն և անարգումն ։

4․ Խոստանամ առ ՚ի արհամարհել․ և անարգել․ զի արհամարհեմ և անարգեմ զամենայն մեղսն ․ զորս ես արարի ընդդէմ ա̄ծային փառացդ ։ Եւ ըղձամ ՚ի յայս միկ կիտի ունիլ զայնպիսի մեծ կսկիծ․ զի պայթուսցէ զսիրտ իմ։ միայն սակս զայրացուցանելոյ իմոյ զքեզ ։ Եւ ՚ի նշան ցաւոց իմոց յամենայն սրտէ՝ խնդրեմ ՚ի քէն զմահ․ և յօժարութեամբ ընդունիմ․ զի այս մարմինս իմ կերակուր որդանց լինիցի․ և դարձցի ՚ի փոշի․ իբրև զչար գործիք․ որով ես ՚ի բարկացուցանել զո̄րդ փառաց ՚ի կիբառի ։

5։ Խոստովանիմ․ զի եթէ զբարեգործութիւն ինչ արարի ՚ի կեանսն իմ․ է՛ բովանդակն քո ։ վ̄յ առ քեզ մատուցանեմ ․ որպէս ինչ քոյ։ Քեզ փառք․ և ինձ անարգանք․ զի խառնեցի ՚ի յայնս բազմիցս զանկատարելութիւն ՚ի հետևիլ այնմ ։ Ոչ կամնում ՚ի գործս իմ զյոյսն առ ՚ի փրկել զիս ․

զիս · այլ միայն 'ի ամենազնիւ գանձն
գործոց չըչըրնց ։ և արդեանց քոց · Յս՟ իմ.
առ քեզ մատուցանեմ զայն ամ՟ որ բարեց՟
և արդարած՟ գործեցին սբ՟ք քո · 'ի մէջ
որոց խոնարհամ՟ յուսամ. և խնդրեմ անու
անիլ ։

6. Խոստովանիմ · զի 'ի աստուածական
ձեռաց քոց · ընկալայ գերազանցաբար
բիւրապատիկ աւելի քան զամենայն ար-
դիւնսն իմ · զանթիւ բարութիւնս ։ ազդ-
մունս ։ զհոգևոր օգնութիւնս · և զի վեր-
ջապէս դու վարեցար ընդ իս իբր Հայր
գթած ։ ուստի ընծայեմ զմեծագոյն և
զգործունեայ շնորհսն · զորս կարեմ ես .
և աղաչեմ զքեզ · և խնդրեմ հանապա-
զորդել զսէր քո ։ և զբարերարութի · 'ի
մէջ նախապետականացն այնոցիկ խնդրեմ
զկնի շնորհաց քոց առնել զիս մասնակից
և հաղորդ ամենայն ներբողուեց · զոր
շնորհէ եկեղեցի քո այնմ · որ կայ
'ի կիտի մահու ։ զի ընկալայց զայն-
քան · զորքան ես ընդունակ եմ յընդու-
նիլ ։

8. Խոստանամ վերջապէս տէր իմ · և
փրկիչ · զորքանս մինչև ցայժմ խօսեցայ ·
է՛ այս վերջին կամքն իմ ։ և սակայն յամ
փորձութիւն՝ որք եկեսցեն 'ի վերայ իմ ·

այսու խոստմամբ հաստատեալ կացից ։ և զորքանս խոստանայցեն տր̃ ապաշխարողքն. և 'ի հաստատութե̃ն այսմիկ իմոյ անձայն կամաց. համբուրեմ ո՛վ ամենաքաղցր Յս̃ իմ. զվէրս կողի քոյ. անուամբ Հօր. և Որդւոյ. և Հոգւոյն Սբյ ։

ամէն ։

Այժմ պարտէ համբուրել զքահանային ձեռն տէրն շնորհակալութեն. և ապա աղօթէ ։

Որդեակ՝ ասա ինձ. եթէ դու յիշեցեիր զմեղս ինչ. մինթէ ոչ ունէիր զդիտաւորութն առ 'ի խոստովանիլ զայնս ։ Մինթէ ոչ ներես յամենայն սրտէ քումմէ զյանցանս ընկերի քոյ. որ բարկացուցեալ իցէ զքեզ ։

Ցանկա՞ս արդեօք. զի յաւանդել զհոգի քոյ. տաց քեզ զխորհրդական արձակումն ։ Թէպէտ ոչ կարիցես խնդրել զայն սակս ոչ կարելոյ խօսիլ. և կամ տալ նշան ինչ ։

Եւ եթէ ասէ. այո՛. կարես տալ արձակումն 'ի վերջին շնչոյն վասն այնմ դիտաւորութեանն ։

Զկնի

Զկնի հարցաքննութեան. դնէր 'ի պարանոցն նր̃ զնափորոն. և սրսկեալ զհոգևորն ջրովն օրհնելով. ասա:

Յանուն Հօր՝ և Որդւոյ՝ և Հոգւոյն սբ̃յ. ամէն:

ք. Հաստատեա զայս տր̃. զոր արարեր 'ի մեզ:
ս. 'Ի տաճարի սբ̃յ քում. որ է՛ յեմ̃:
ք. Փրկեա զծառայ քո:
ս. Ած̃ իմ. զյուսացեալս 'ի քեզ:
ք. Լեր նմա տր̃ աշտարակ զօրութեան:
ս. Յերեսաց թշնամւոյն:
ք. Մի՛ մեղիցէ նմա թշնամին:
ս. Եւ որդի անօրէնութեան մի՛ չարչարեսցէ զնա:
ք. Տէր՝ լուր աղօթից իմոց:
ս. Եւ աղաղակ իմ առ քեզ եկեսցէ:
ք. Խաղաղութիւն ամենեցուն:
ս. Եւ ընդ հոգւոյդ քում:

Աղօթեսցուք:

Ած̃՝ որ սիրելեաց քոց՝ զբոլորսն օգտակար առնես. տուր սրտի ծառայի քոյ զանեղծանելի սիրոյ քոյ զփափաքն.

զի զայն յղացեալ խղճն 'ի յազդմանէ քումմէ. ոչ կարասցեն փորձութիւնքն փոփոխել:

Ամենակալ և ամենահզօր՝ անոխակալ տէր. հայեաց յաղօթս մեր. և ազատեա զսիրտ ծառայի քո 'ի չար խորհրդոց փորձութեանց. զի հոգւոյդ սրբոյ օթարան լինել արժանասցի:

Ամենակարօղ և ողորմած տէր. որ ազգի մարդկան և փրկութեան զդեղն. և զկենացն յաւիտենականաց ըղպար գեւան բերեր. Հայեաց անոխակալ 'ի ծառայ քո այս անուան. 'ի տկարութէ մարմնոյ վաստակեալն. և բորբոքեա զհոգին. զոր ստեղծեր. որ 'ի ժամու ելանելոյ նր. առանց մեղանաց բծի. քեզ ստեղծողիդ՝ 'ի ձեռն նըց հրեշտակաց ներկայանալ արժանասցի, 'ի Քս Յս. 'ի տէրն մեր: Ամէն:

Ե

Եւ յետոյ ցանելով 'ի մահիճն․ և յօ
թևանն զջուրն օրհնեալ։ Մեծա
յուսով և հաւատով աղաչելով
առնելով զբանն, ասա :

Երդմնեցուցանեմ զձեզ ամ անմաքուր ոգիք։ բռնադատեմ․ և սաստեմ․ նովիմբ․ որ էրն․ որ է՛․ և որ գալոցն է՛։ որ արարն զմեզ․ և փրկեաց զմեզ արեամբն իւրով․ խաչիւն․ մահուամբն․ թաղմամբն․ և յարութբն իւրով․ որ աստ և ընդ ամ տեղիս ներկայ է՛։ Եւ անուամբն նոյնոյ տն մերոյ Յսի Քսի․ և երանելւոյ կուսին Մարիամու․ Մօրն նր ծննդեամբ․ և մեզ շնորհօք․ զի աստի փոյթ ընդ փոյթ մեկնեալ հալածիք․ և մի՛ զատեղծուածս զայս՝ զգնեալսն արեամբն Յսի Քսի տն մերոյ․ փորձութբք․ կամ դաւաճանութբ․ այժմ և և մինչև 'ի վախճան վշտացուցանել համարձակեալ յանդգնիցիք։

Գնացէք 'ի տեղին պատրաստեալ ձեզ յանծայրին արդարութէ․ յորմէ այլ ևս չէք դառնալոց․ 'ի ներքոյ պատժոց ընկղման 'ի լիճն հրոյ, և ծծմբոյ․ ձեռամբ թշնամեաց ձերոց։ Եւ Է պատժովք անիծից․

զոր

զոր մշտնջենաւոր պարտիք կրել։ և վասն կապեմ զձեզ 'ի տեղիս՝ յորս աքսորեաց զձեզ բարձրեալն. Յանուն Հօր ✠. և Որդւոյ. ✠ և Հոգւոյն ✠ սրբոյ. և այնոցիկ սրբոց. որք նստին փառաւորեալք՝ 'ի յաթոռս. ուստի դուք չուառականք՝ արտաքսեցայք։

Յանուն Յսի Քսի խաչելոյն. ✠ Յանուն ամենօրհնեալ կուսին Մարիամու ✠. հալածեսջիք ամ անիծեալ դևք. և հակառակք ծառայիս այսմիկ։

Կարողութին ԱԾ Հօր. ✠ իմաստութին ԱԾ Որդւոյն ✠ Զօրութին ԱԾ Հոգւոյն. ✠ օրհնեսցէ զքեզ։ պահեսցէ զքեզ. պաշտպանեսցէ զքեզ. այժմ և մինչև 'ի վախճան կենաց քոց։

Կայսերական փառքն զքեզ օրհնեսցէ։ ✠ Թագաւորութին ամենայնին՝ զքեզ պաշտպանեսցէ։ ✠

Յաւիտենականութին Ածութն՝ զքեզ պահեսցէ. ✠ Ամէն.

Եւ յետոյ յորդորեա՛ զնա միայն հաստատ 'ի յիւրում յառաջադրութեն և խոստմանցն զոր արար ԱԾ։ Ուստի եթէ մերձակայ որոգայթն ոչ պահանջեսցէ։ Թող զնա 'ի խաղաղութեն։ և եթէ հարկ իսկ, իցէ չուել.

չուել․ սրսկեա՛ զնա օրհնեալ ջրովն․
միայն աղաչեմ զքեզ մի՛ թողուլ զնա մինչ
յիշել յաղօթս քո ։ յիշեա՛ զնա յա՟մ գործս
քո․ և մանաւանդ ՚ի մատուցման ս՟րբ
Պատարագին ։

Յորժամ հիւանդն ՚ի վերջին շնչայ է՛ ։
Մտեալ քոյ ՚ի յօթևանն հիւանդին․
և սրսկեալ զօրհնեալ ջուրն ՚ի վ՟ր
ն՟ր․ և շրջակայիցն․ և ողջ
տեղւոյն ասասցես ։

Յանուն Հօր ✠․ և Որդւոյ ✠․ և
Հոգւոյն ✠ ս՟րբ․ Ամէն ։
ք․ Յարիցէ ա՟ծ․ և ցրուեսցին ամենայն
թշնամիք նորա․ փախիցեն ատելիք ն՟ր
յերեսաց նորա ։
ս․ Որպէս պակասի ծուխ՝ պակասեսցին․
որպէս հալի մոմ․ առաջի ն՟ր․ այնպէս
կորիցեն ա՟մ դևք յերեսաց ն՟ր ։
ք․ Տ՟ն պահեսցէ և կենդանացուսցէ
զքեզ ։
ս․ Եւ ոչ մատնեսցէ զքեզ ՚ի ձեռնթշնա
մեաց քոց ։
ք․ Տ՟ն եղիցի ՚ի յառաջնորդ քո ։
ս․ Եւ հրեշտակ ն՟ր պաշտպանեսցէ
զքեզ ։

ք․ Խա

Ք. Խաղաղութի ամենեցուն ։
Ժ. Եւ ը̄ հոգւոյդ քում։

## Աղօթեսցուք ։

Խնդրեմք 'ի քէն տր̄ . զօրացո՛ զծառայ քոյ այս անուն զի 'ի սատանայական հաղթից փախուցեալ. քեզ տն̄ միայն մաքուր մտօք հետեւեսցի։

Խնդրեմք 'ի քէն տր̄ . զի դեղովն եւ միջնորդութ̄ն ողորմութե̄ քոյ՝ բժկանաւորութե̄ն նր̄ հաստատեսցի . եւ որ'ի բնութ̆ իւրմէ մաշի . գթութե̄ն քո վերստին նորոգեսցէ ։

Աղաչեմք զգթութե̄ քո ամենակարող ած̄ . զի զօրութ̄ ամենակեցուցիչ չարչարանաց քոց . զծռ̄յ քո . այս ան̄ 'ի շնորհս քո հաստատեսցես . զի 'ի ժամու մահու նր̄ մի՛ զօրասցի ընդդէմ նր̄ թշնամին բարեաց . այլ ը̄ հրեշտակաց քոց փոխեսցի 'ի հանդերձեալ կեանսն ։ ամէն ։

Եւ յետոյ ծռ̄յեան նմա յորդորմամբն եւ աղօթիւքն որպէս գրեալ է՛ 'ի վերոյ . եւ այլով, զորս աստ դնեմք . բայց երբեմն երբեմն . հանապազորդեա յաղօթս եւ 'ի խնդրուածս 'ի փրկութե հգ̄յ նր̄ .

Ուստի

Ուստի եւս կարես ասել զխնթանիւյն կուսին Մարիամու ծննդեանն. և 'ի վերջն ասասցես զայսոսիկ բանս:

ք. Փրկեա զծառայս քո տէր:
ս. Ած իմ. զյուսացեալսն 'ի քեզ:
ք. Առաքեա՛ տր օգնութիւն 'ի սրբոյ:
ս. Եւ 'ի սիօնէ ընկալ զնա:
ք. Լեր նմա տր աշտարակ հզօր.
ս. Յերեսաց թշնամւոյն:
ք. Բարեխօսեա՛ վասն մեր ծնօղդ Այ:
ս. Զի արժանի լիցուք խոստմանցն Քսի:

## Աղօթեսցուք:

Շնորհեա՛ տէր. զի ծառայ քո այս անուն մշտնջենաւոր առողջութբ̃ հոգւոյ և մարմնոյ՝ ուրախասցի. և բարեխօսութբ̃ ամենօրհնեալ կուսին Մարիամու ծննդեանն. 'ի ներկայ թշուառութենէց ազատեալ. յաւիտենական ուրախութեանն հանդիպեսցի: Ամէն:

## Աւետումն:

1. Որդեակ՝ յանձնեա՛ զքեզ առ ամենասրբուհի կոյսն. որ է՛ մայր մեղաւորաց:

2. Որ

2։ Ուղեակ՝ սաս Է ևս ․ Ամենամաքուր
կոյս ․ քեզ յանձնեմ զիս ․ 'ի քեզ յու
սամ ․ 'ի փրկել զիս ։

3․ Կոյս ։ և Մայր ԱՅ օգնեա ինձ ։

4․ Մայր ողորմութե֊ն ․ պաշտպանեա
զիս քոյով կարող օգնութեամբդ ։

Երեք ողջոյն քեզ Մարիամ ․ Է երից
աղօթից Մարիամու կուսին ․ զոր
ուսոյց նոյն ինքն Կոյսն
սրբուհւոյ մեթիլտէի,
վասն բարի Մա
հուան ։

Ով տիրուհի իմ, Կոյս Մարիամ ․ զի
որպ ԱՅ Հայր ամենակարողութե֊ն իւ
րով ․ կարող արար զքեզ 'ի յերկինս ։ Ա
ղաչեմ զքեզ ․ զի ծառայի քոյ այժմիկ
պաշտպան լինիցիս 'ի յայժմիկ ժամու ․
վանելով 'ի նմանէ զամենայն հակառակ
իշխանութեան ․ Ողջոյն քեզ Մարիամ ։
Ով տիրուհի իմ ․ կոյս Մարիամ ․ զքեզ
որդին աստուծոյ իւրով իմաստութե֊ն ․
այնքան սիրով լուսաւորեալ պայծառա
ցոյց ․ զի զբոլոր երկինս պայծառացու
ցուցանես ։ Աղաչեմ զքեզ ․ զի յայժմիկ
ժամու մահուան ծառայի քոյ՝ այնչափ լու
սաւո

սաւորեսցես . և ամրացուսցես զմիտս
նր՟ ճանաչողութ՟ն հաւատոյ . զի ոչինչ մո
լութ՟ք . կամ տգիտութ՟ք փոփոխեսցի :

ողջոյն Մարիամ :

Ո՜վ սրբուհի կոյս Մարիամ . 'ի քեզ հո
գին որ յամենայն կողմանէ առատապէս
զմերս եհեղ : Աղաչեմ զքեզ Մայր ամե
նազօրութ . զի 'ի ժամու մահուան այս
միկ ծառայի քոյ հեղձես 'ի հոգի նր՟ զքաղց
րութ՟ին անձայնին սիրոյ : որ զամենայն
մահուան դառնութիւնսն քաղցրացուցա
նէ . ամէն : ողջոյն չէ՟ Մարիամ :

Ո՜վ Մարիամ կոյս ամէնասիրելի . զողոր
մութ՟ին քոյ է ծառայի քոյ հոգեվարի հրա
շագործես . միայն 'ի քեզ զյուսացեալն
փրկեա : 'ի յայնմիկ ահեղ սաստկութեն
կոչեմ զքեզ : զի ամենաքաղցր հայեց
մամբ քո զնա զուարձացուսցես : օգնեա
ո՜վ ամենագթած տիրուհի ծառայի քոյ .
այս անուն . և առ ամենաքաղցր որդի
քոյ՝ յանձնեա զհոգի նր՟ : քանզի քաղցր
քոյով օգնութ՟ն . 'ի զարհուրանաց և 'ի
չարչարանաց ազատեալ . 'ի փափաքելի
երկնային հայրենիքն հանգստեան . քոյով զ-
ընկերակցութ՟ք ժամանեալ հասցէ :

Ամէն :

Վէր

Վերջին յաւելուած։

1. Որդեակ աստ ․ Մարիամ Մայր Շնորհաց ․ Մայր ողորմութեան ․ պաշտպանեա՛ զիս ՚ի թշնամւոյն ․ և ըն-կալ զիս ՚ի ժամու մահուան իմոյ։

2. Կոյս ամենէներջանիկ ․ զկնի Այ ․ զամենայն զյոյս իմ եդեալ եմ ՚ի քեզ։

3. Մայր կոյս ․ Մայր ամենասրբու-հի ․ ցոյց ինձ զմայրական գթութիւն քո։

Ասէն աստ պլէնանեայն ոէյ, ընդ Հաղջակայեցն։

Տր ողորմեաց ․ Քս ողորմեաց։
Տր ողորմեաց ․ Քս ողորմեաց։
Տր ողորմեաց ․ Քս ողորմեաց։
Սրբուհի Մարիամ։ բարեխօսեա՛ վն մեր։
Ամ սբ հրշտակք ․ և հրեշտակապետք։ բարեխօս։
Սբ ․ Աբէլ։ բարեխօս։
Ամ Դասք արդարոց։ բարեխօս։

Ս՟բ Աբրահամ. բարեխօս:
Ս՟բ Յօհաննէս Մկրտիչ. բարեխօս:
Ամ՟ ս՟բ նահապետք. և Մարգարէք:
բարեխօս՟ք:
Ս՟բ Պետրոս. բարեխօս:
Ս՟բ Պօղոս: բարեխօս:
Ս՟բ Անդրէաս: բարեխօս:
Ս՟բ Յօհաննէս. բարեխօս:
Ամենայն ս՟բ Առաքեալք և Աւետարանիչք.
բարխս՟ք:
Ամ՟ ս՟բ Աշակերտք տ՟ն. բարեխօս՟ք:
Ամ՟ ս՟բ Անմեղք. բարեխս՟ք:
Ս՟բ Ստեփաննոս. բարեխօսեա՛
Ս՟բ Լաւրենտիոս. բարեխօսեա՛:
Ամ՟ ս՟բ Մարտիրոսք. բարեխս՟ք:
Ս՟բ Սեղբեստրոս. բարեխօս:
Ս՟բ Գրիգոր լուսաւորիչ. բարեխօս:
Ս՟բ Օգոստինոս. բարեխօս:
Ամ՟ ս՟բ Հայրապետք. և խոստովանողք.
բարեխօս՟ք:
Ս՟բ Պենետիքտոս. բարեխօս:
Ս՟բ Ֆրանչիսկոս. բարեխօս:
Ամ՟ ս՟բ միայնակեացք և անապատաւորք.
բարեխօս՟ք:
Ս՟բուհի Մարիամ Մագդաղենացի.
բարեխօսեա՛:
Ս՟բուհի Լուկիա. բարեխօս:

Ամ̃ ս̃ք կուսանք և այրիք․ բարեխօս̃ք:
Ամ̃ ս̃ք , և Սրբուհիք Ա̃Ծ․ բարեխօս̃ք:

Քաւիչ լեր նմա․ Լուր նմա տ̃ր:
Այցելու լեր նմա․ զերծո զնա տ̃ր:
Խնայեա՛ նմա․ զերծո զնա տ̃ր:
'Ի բարկութենէ քումմէ․ զերծո:
'Ի յորոգայթէ մահու: զերծո:
'Ի չար մահուանէ․ զերծո:
'Ի պատժոց դժոխոց․ զերծո:
'Ի զօրութենէ դիւին․ զերծո:
Վ̃ն ծննդեան քո: զերծո:
Վ̃ն խաչի և չարչարանաց քոց: զերծո:
Վ̃ն մահու․ և թաղման քո․ զերծո:
Վ̃ն փառաւոր յարութե̃ քո․ զերծո:
Վ̃ն սքանչելի համբարձման քո․ զերծո:
Վ̃ն շնորհաց հոգւոյն ս̃բ մխիթարչի․ զերծո:
Յաւուր դատաստանի․ զերծո:
Մեղաւորքս․ Զքեզ աղաչեմք լուր
Զի մեզ լուիցես․ զքեզ աղաչ̃ լուր մեզ:

Տ̃ր ողորմեա․ Ք̃ս ողորմեա․
Ք̃ս լուր մեզ․ Ք̃ս յար լուր մեզ:
Տ̃ր ողորմեա․ Ք̃ս ողորմեա:

Հայր մեր որ յերկինս: ամէն:

## Վերջաւորն յաւելուած :

1. Որդեակ յանձնեա դու զքեզ յամ̃ սրտէ քումմէ առ պաշտպան մ̃րս քո :

2. Մր̃ այս անուան : ուրոյն առնի զանուանն օգնեա ինձ 'ի յայսմիկ կէտի :

3. Հրեշտակ իմ պահապան պաշտպանեա զիս 'ի թշնամեաց իմոց:

4. Մր̃ Հայր Յովսէփ . բարեխօսդ հոգեվարաց . գթա և յիս 'ի յայսմիկ վերջին կէտիս :

6. Կոյս ամէներջանիկ . ցոյց զմայրական գթուն քո :

## Եւ այս աղօթս :

ԵԼ չուեա́ հոգի քրիստոնէի յայսմիկ աշխարհէ . Անուամբ Ած̃ Հօր ⁂ ամենակարողի : որ զքեզ արար : Անուամբն Յի̃ Քսի̃ . ✠ որդւոյ Ած̃ կենդանւոյ . որ վասն քոյ չարչարեցաւ : Անուամբ Հոգւոյն սբ̃յ ✠ որ 'ի քեզ հեղաւ :

ղաւ: Անուամբն Հրեշտակաց: Անուամբն Աթոռոց: և տէրութեց: Անուամբն իշխանութեց. և Պետութեց: Անուամբն Քերովբէից: և Սերովբէից: Անուամբն Նահապետաց. և Մարգարէից: Անուամբն ս̃բց Առաքելոց. և Աւետարանչաց: Անուամբն ս̃բց Մարտիրոսաց. և խոստովանողաց: Անուամբն ս̃բց անապատաւորաց և ճգնաւորաց: Անուամբն ս̃բց կուսանաց. և ամենայն ս̃բց, և սըրբուհեացն Ա̃յ: այսօր 'ի խաղաղութե եղիցի տեղի քո. և բնակութի քո 'ի սիօն: 'ի Ք̃ս Յ̃ս 'ի տ̃ր մեր. Ամէն:

Աղօթք:

Տ̃ր ողորմած. Ա̃ծ գթած. Ա̃ծ. որ ը̃ս բազմութե ողորմութե քո զմեղս ապաշխարողաց քաւես: և զյանցաւորաց զյանցանս ներողութբն ջնջես: Հայեաց յօգնել ծ̃ռյի քո այս անուն: Տուր հայցողին յամենայն սրտէ զթողութի մեղաց իւրոց: Նորոգեա անոխակալ տ̃ր Հայր. ամենայն երկրաւոր բնակաւորութի զապականեալն. կամ և դիւական դաւաճանութի զպղծեալն. և միութե մարմնոյ եկեղեցւոյ զանդամն փրկութե միացո:

միայն : Ողորմեա տր̃ հեծեծման նր̃ . և
ողորմեա արտասուաց նր̃ . զի միայն 'ի
քեզ և յողորմութի̃ քո ապաւինեալ է՛ .
և ընկալ զնա տէր . զի խորհրդովք քովք
պանծացեալ է՛ : 'ի Ք̃ս Յ̃ս 'ի տէր
մեր :

Յանձն առնեմք քեզ տր̃ զհոգի ծառայի
քո . այս անուն նախ քեզ տր̃ մեր Յ̃ս
Ք̃ս փրկիչ աշխարհի . որոյ սակս գթա
ծաւալ իջեր յերկիր . 'ի գոգս նահապե
տաց քոց զետեղեսցես :

Զուարճացո տէր զհոգի նր̃ առաջի քո :
և մի՛ յիշեր զանցեալ անգիտութեան նր̃ .
և զարբեցութի̃ն . զորս յարոյց սրտմտու
թի̃ն . կա̃մ . ջերմութի̃ն չար ցանկութե̃ց .
թէ և ս մեղաւ : սակայն զհայր՝ և զոր
դի և զհո̃գի Հոգին ոչ ուրացաւ . այլ
հաւատաց : և զնախանձն աստուծոյ 'ի
յինքն իւր ընկալաւ . և Աս̃ . որ արարն
զնա : երկիրպագ :

Վէրջին յաւելթ-ած :

1. Որդեակ՝ ասա 'ի ներքո սրտէ : տէր՝
ողորմեա հոգւոյ իմում:

2. Մեղայ : բայց ջաւ մեծ է՛ ինձ յամ
մրտէ :

3. Կամէի նախ մեռանիլ. ք̃ զքեզ բարկացուցանել:

4. Յս̃ իմ. ընկալ զհոգի իմ. զոր արարեր. և փրկեցեր:

5. 'Ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ:

## Աղօթ*:

Ընկալ տէր զծ̃ռյ քո 'ի տեղի փրկութե̃. զոր յուսայ յողորմութէ̃ քում մէ : Պ̃սխն : Ամէն:

Զերծո տ̃ր զհոգի ծառայի քո յամենայն դժոխային որոգայթից. և 'ի դժուարութեց պատժոց. և յա̃մ անձկութեց : Պատ̃նի. Ամէն:

Զերծո տէր զհոգի ծառայի քո. որպէս ազատեցեր զենովք, և զեղիա 'ի հասարակ մահու աշխարհի : Ամէն:

Զերծո տէր՝ զհոգի ծառայի քո. որպէս փրկեցեր զնոյ 'ի ջրհեղեղէն: Ամէն:

Զերծո տէր զհոգի ծառայիքոյ. ո̃պ ազատեցեր զԱբրահամ յերկրէն քաղդէացւոց: Ամէն:

Զերծո տէր զհոգի ծառայի քո. ո̃պ

փրկե

փրկեցեր զյոբ 'ի տառապանաց իւրոց :

Ամէն :

Զերծո տէր զհոգի ծառայի քոյ . որպէս փրկեցեր զիսահակ 'ի թշնամեաց . և 'ի ձեռաց Հօր նորին աբրահամու :

Ամէն :

Զերծո տէր զհոգի ծառայի քոյ . որպէս ազատեցեր զղովտ 'ի սոդոմացւոց . և 'ի հրոյ բորբոքելոյ : Ամէն :

Զերծո տէր զհոգի ծառայի քոյ . որպէս զերծուցեր զմովսէս 'ի ձեռաց փարաւոնի արքային եգիպտացւոց : Ամէն :

Զերծո տէր զհոգի ծառայի քոյ . որպէս ազատեցեր զդանիէլ 'ի գբոյ առիւծուց :

Ամէն :

Զերծո տէր զհոգի ծառայի քոյ . որպէս ազատեցեր զերիս մանկունսն 'ի հրոյ բորբոքելոյ . և 'ի ձեռաց անօրէն արքային :

Ամէն :

Զերծո տէր զհոգի ծառայի քոյ . որպէս փրկեցեր զշուշան 'ի սուտ վկայից : Ամէն :

Զերծո տէր զհոգի ծառայի քոյ . որպէս փրկեցեր զդաւիթ 'ի ձեռաց արքային սաւուղայ . և 'ի ձեռաց գողիադու .

Ամէն :

Զերծո տէր զհոգի ծառայի քոյ . որպէս ազա

տեցեր զպետրոս . և զպօղոս 'ի բանտից :
Ամէն :

Եւ որպէս զերանելի Թեկղի կոյսն . և զմարտիրոսն . 'ի յաՀեղ սարսափելի չար չարանաց ազատեցեր . նոյնպէս ազա֊ տեսցես զՀոգի ծ̃ռյիս քո այսմիկ . և ը̃ քեզ արժանի արասցես 'ի բարութ̃իս եր կնից վայելել : Ամէն :

Վերափին յաւելուածն :

1. Ո՛վ այս անուան սաս 'ի բոլոր սրտէ . տէր ես յուսամ 'ի յամ̃ծայնս ողոր մութ̃ի քոյ՝ առ 'ի կեցուցանել զիս :
2. Մի՛ թողցես զիս Յ̃ս իմ 'ի շնոր Հաց քոց բարեաց :
3. Տէր՝ ընկալ զիս արդեամբք ամենա ս̃բ չրչ̃րնց քոց :
4. Մի՛ թոյլ տացես Յ̃ս իմ . զի թշնա մին իմ ը̃ առաջելցէ ինձ :
5. Տէր 'ի քեզ Հաւատամ . 'ի քեզ յու սամ . զքեզ խնդրեմ . զքեզ սիրեմ . և ցանկամ սիրել զքեզ յաւիտեանս յաւիտե նից : Ամէն :

Քանզի դեռ 'ի վերայ այնմ ծայրի մա Հու , ամենայն զօրութ̃ն ջանայ առ 'ի

շա

շահիլ զհոգին հիւանդին · վ՟ոյ ասա մե
ծաւ հաւատով՝ սրսկելով զջուր օրհնեալ
շուրջ զանձամբն, և զմեննեկաւն :

Յանուն Յս՟ի Քս՟ի խաչելոյն : ✠ Յա
նուն ամենափառաւոր կուսին Մա
րիամու ✠ հալածեսջիք ամենայն անի
ծեալ դևք · և թշնամիք այսմիկ ծառայի ·
կարողութ՟ն ա՟յ Հօր · ✠ իմաստութ՟ն
Որդւոյն ա՟յ : ✠ Զօրութ՟ն հոգւոյն
ս՟րբ : ✠ օրհնեսցէ զքեզ · պահեսցէ զքեզ
և պաշտպանեսցէ · 'ի յայսմ ժամու մա
հուան քոյ : Ամէն :
Դժ՟խ՝ անդրէն վերստին երդմնեցուցանեմ
զձեզ՝ ամենայն անմաքուր ոգիք · բռնա
դատեմ. և ստիպեմ · զօրութ՟բն Արեանն
Յս՟ի Քս՟ի · զի հալածեսջիք՝'ի տեղւոջէս
յայսմանէ · և ոչ համարձակիցիք զստեղ
ծուածս զայս 'ի փորձութիս և 'ի դաւս
արկանել :
Ահա խաչն Տ՟ն ✠ փախերուք թշնամիք
բարեաց : Յաղթեաց Առիւծն 'ի ցեղէն
Յուդայ · յարմատոյն Դաւթի · Ամէն :

Ար°

## Աղօթք ։

Աղաչեմք զքեզ տէր . զԹշնամեաց մե
րոց զհպարտութիւն խորտակեա .
և զամբարտաւանութիւն նց զօրութբ աջոյ
քոյ խապառ փշրեա :
Ամենակալ յաւիտենական Աստուած . խոստո
վանող ծառայի քոյ զմեղս Թողլոյ . զի մի՛
այլ ևս վնասեսցէ մահապարտութիւն խղճի
մտաց ՚ի պատիժս . որոյ ներողութիւն
քոյոյ օգնականութեան օգտէ ՚ի Թողութիւն :
Խնդրեմք ՚ի քէն տէր . զօրացո զծառայ
քոյ այս անուն : զի ՚ի դիւական հաղբից
փախուցեալ՝ քեզ տն միայն մաքուր
մտօք հետևեսցի : ՚ի քն յն ՚ի տր մեր :
Ամէն :

Վերափին յաւելուած :

1. Եթէ դևն որդեակ բերցէ ՚ի միտս
քո զիրս ոմանս ընդդէմ հաւա-
տոյ . մի՛ ունկնդիր լեր :
2. Այս ՚ի բոլոր սրտէ . հաւատամ
զայն ամ տէր . զոր յայտնեցեր եկեղեցւոյ
քում սրբոյ :

4· Տէր․ օգնեա ինձ և իմոյս տկար հաւատոյս․ և զօրացո զնա։

4· Տէր․ ՚ի քեզ յուսամ ՚ի փրկել զիս․ ՚ի քեզ դնեմ զա̃մ զյոյս իմ։

Եթէ հիւանդն յարատեւէ ՚ի հոգեվարուէն․ կարես ասել զայլ աղօթս․ որ գրեալ է՛ ՚ի մաշտոցին։ այլն զգոյշ լեր․ զի զայն՝ որ է՛ եղեալ ասա՝ ոչ պարտիս ասել զա̃ն ՚ի միասին․ այլ ժամանակս ժամանակս․ առ ՚ի ոչ վնասել հոգեվարին։

## ՚Ի Վերջին շնչառութե։

1· Որդ՝ զօրացիր որդեակ․ ասա յամենայն սրտէ․ Յս̃ իմ օգնեա ինձ։

2· Ամենօրհնեալ կոյս․ հաս ինձ ՚ի թիկունս։

3· Հաւատամ․ յուսամ․ սիրեմ զքեզ տ̃ր իմ ՚ի յաւիտեան։

4· Տ̃ր․ ընկալ զհոգի իմ։

5· Յս̃․ քեզ յանձնեմ զհոգի իմ։

6· Մարիամ Մայր շնորհաց ընկալ զիս յայսմիկ ժամու։

7· Յս̃․ Յս̃․ Յս̃։ քեզ ընծայեմ զսիրտ իմ․ և զհոգի իմ։

Աղօ

## Աղօթեսցուք.

Ամենակարօղ յաւիտենական Ած. տուր այսմիկ ծառայի քոյ՝ զհանգստոյ. զյուսոյ. և զխնդրոյ անձինն. զի արժանի լիցի հասանել այնմ. զոր խոստացար. և արա սիրել զայն՝ զոր պատուիրես 'ի Քս̅ Յս̅ 'ի Տր̅ մեր: Ամէն:

1. Գձլ՝ ասա յա̃մ սրտէ. Տ̃ր իմ Թողութի̅ տուր ինձ:
2. Յս̅. ընկալ զիս 'ի մէջ սրբազան վիրաց քոց:
3. Կոյս ամենամ̃բ պաշտպանեա զիս:
4. Ով Յս̅ իմ. փրկեա զհոգի իմ:
5. Յս̅. և Մարիամ. ձեզ ընծայեմ զհոգի իմ. և զսիրտ իմ:
6. Տէր Յս̅ Քս̅. ընկալ զհոգի իմ:
7. Յս̅. Յս̅. Յս̅. փրկեա զիս 'ի յաւիտենան:

Եթէ 'ի վերջի կէտին է՛ հիւանդն. ասա շրջակայիցն՝ զի ասասցեն զլիթանիայն ամենամ̃բ կուսին: և յանձնեսցեն զնա տեառն:

Ընդ

Ընդ առանձնել հոգւոյն ասասցես :

Սրբք այ օգնեցէք · ընդ առաջ ելէք հրեշտակք այ · ընկալարուք զհոգի սորա · և մատուցէք առաջի այ Բարձրելոյն : Ընկալցի զքեզ Քս · որ կոչեացն զքեզ · և 'ի գոգն աբրահամու հանգուսցեն զքեզ հրեշտակք զօրուեց · ընկալեալ զհոգի քո · և մատուցեալ զնա յերեսս Բարձրելոյն : Զհանգիստ յաւիտենական պարգևեա նմա տէր · և լոյս մշտնջենաւոր լուսաւորեսցէ զնա · մատուցանելով զնա առաջի բարձրելոյն :

Տէր ողորմեա · Քս ողորմեա :
Տէր ողորմեա · Հայր մեր՝ որ յերկինս ես :

ք· Եւ մի' տանիր զմեզ 'ի փորձութի :
ա· Այլ փրկեա 'ի չարէ :
ք· 'Ի դրանց դժոխոց :
ա· Ազատեա տէր զհոգի սորա :
ք· Հանգիցէ 'ի խաղաղութե · ա· Ամէն :
ք· Տէր լուր աղօթից իմոց :
ա· Եւ աղաղակ իմ առ քեզ եկեսցէ :
ք· Խաղաղութի ամենեցուն :
ա· Եւ ը̃ հոգւոյդ քում :

Աղօթ

Աղօթեսցուք ։

Քեզ տէր յանձն առնեմք զհոգի ծառայի քոյ այս ան ։ զի վաղճանեալ 'ի կենցաղոյս․ կենդանասցի 'ի քեզ․ և զմեղս՝ զորս մարդկային տկարութեամբ գործեաց․ դու ներողութեամբ ողորմութեան քոյ ջնջեալ քաւեսցես 'ի Ք͞ս Յ͞ս 'ի տէր մեր ։ Ամէն ։

Եթէ զանօրէնութիւնս իմ քննես ։ սաղմոս ։

Ի խորոց կարդացի առ քեզ տէր տէր լուր ձայնի իմ ։ Եթէ զանօրէնութիւնս իմ քննես տէր․ տէր ո՞վ կարէ կալ առաջի քոյ ։

Աղօթեսցուք ։

Խնդրեմք 'ի քէն տ͞ր․ ազատեա զհոգի ծառայի քոյ՝ յա͞մ կապից յանցանաց․ զի յարուցեալ 'ի մէջ սրբոց և ընտրելոց քոյ՝ յաւիտենական զուարճութեամբ բերկրեսցի․ 'ի Ք͞ս Յ͞ս 'ի տ͞ր մեր․ որ է՛ օրհնեալ յաւիտեանս․ Ամէն ։

Եւ

Եւ ապա պարտիս առնել զաակաւ բանս յորդորանաց անդէն գտանելոց. զի ոչ կարեմ առնել. թէ որքան գործունեայ շահու ելանիցեն անտի. տեսանելով զներկայ առարկայն. որ է՛ մեռեալն. և ասասցես այսու կերպիւ:

ԱՎհա ուր ժամանեն փառք՛ն աշխարհիս այսմիկ: Առնեմք. աշխատիմք. խորհիմք. և ապա ահա առ ինչ ածին ամենայն խորհուրդք մեր. ամենայն մտածութիւնք և պատկերակերպութիւնք մեր: Յորժամ հոգին այսմիկ մեռելոյն. չիցէ փրկեալ. զոր յուսամ մեծապէս. զինչ օգտէր այժմ թէ և էիցէր իշխանն ամենայն աշխարհի: Ոչինչ: Արդ՝ եթէ տ̄րն դնէ առաջի աչաց մերոց զապացոյցն չուառութեն մերոյ. զօրացուսցուք զմեզ շնորհօք. զոր տայ մեզ տ̄րն: և խնդրեսցուք գործել վասն հանդերձեալ կենաց. զի միայն զգործս բարիս. կամ զվատթարս տանիմք ը̄ մեզ. և զն̄մ մնացեալսն աստէն թողումք:

Աւ

## Աւ ԻՄ յորդորումն:

Արդ՝ ահաւասիկ վերջացոյց այս ննջեցեալս զկեանսն իւր : եթէ է՛ 'ի տեղւոջ փրկութեան . որպէս յուսամ . երանի նմա : զ՞որպիսի ցաւս կրէ այժմ . զոր մինչև ցայժմ կրեաց : Ոչինչ . իբր թէ ամենևին չիցէ կրեալ : և եթէ այժմ տրտնջեսցէ . միայն է՛ . սակս ոչ կրելոյ այնու հաստատութեան . որպէս վայելուչն էր : Զի այժմ ճանաչէ կատարելապէս՝ թէ զորքանս շահել կարէր՝ կրելով մեծաւ քաջութեամբ : Եւ հաւատա ինձ եղբայր իմ . զի եթէ 'ի ներկայիս կարիցէր դառնալ 'ի յաշխարհ , խնդրէր սաստկագոյնս կրել՝ առ 'ի արդիւնաւորել : Արդ՝ եթէ մեզ առնէ տէր զշնորհս առ 'ի ունիլ զժամանակ 'ի շահիլ զարդիւնս . մի՛ անփոյթ արասցուք զժամու զայսմանէ . Ամ ժամն կարէ մեզ տալ ստանալ զյաւիտենականութեան բարեաց :

## Դարձեալ յորդորումն :

Նայեաց . զի մնաց մարմինն առանց հոգւոյ . մնաց կոճղ մի . սեաւ . կա-

պուտակ․ դունամթափ․ որպէս տեսա_
նեաղ ։ և գիտեմ․ զի երկնչի իւրաքան
չիւրոք ՚ի ձէնջ մերձենալ ՚ի նա ։ և սա
կայն այս դէշս է ՚ի նոյնոյ մարմնոյ մեր
մէ ։ զոր այնքան սիրեմք․ և զի ՚ի սէր
նորա վասն տալոյ նմա զըղձացեալն իւր
ոչինչ հոգամք ՚ի բարկացուցանելոյ զած
մեր․ Յիշեսցուք․ թէ երկիւղն այն․
զոր ներկայապէս ունիմք մեք․ տեսա_
նելով զերկիւղալի մարմինս զայս․ եկես
ցէ ժամանակ․ և մեզ պատահեսցի ։ Եւ
եթէ մարմինս այս ՚ի տեղւոջէս յայսմա
նէ զկնի սուղ ինչ ժամանակի արկանի ՚ի
գերեզմանն․ առ ՚ի կերակուր լինել որ
դանց ։ այսպէս զկնի փոքր ամաց․ կամ
ամսոց․ և թերևս ՚ի յայսմիկ միջոցի ոչ
կարէ բաղմոց պատահել նաև մերն արտաք
սեացի ՚ի տանէ․ և արկցի առ ՚ի դուլ կե
րակուր փտութեանց ։

Արդ՝ մի՛ դդուեալ յանձանցեսցուք
զայս մերն մարմին․ որ է՛ անօթ ինչ
կղկղանաց․ Այլ յիշեսցուք զհոգիս․ որ
մնայ յաւիտեանս յաւիտենից ։

Եւ Քսի Յուսոյն մերոյ փառք յաւի
տեանս Ամէն ։



Ուսի՛ր զկերպ, վերջին օծման.
որ կացուցաւ ի տ͞նէ այն.
պաշտեա՛ զխորհուրդն զայն ը͞ն դիպման.
առաքելոցն հանգունանման:

Կարգ օծանելոյ զհիւանդն. որ է՛ մինն 'ի յեօթն նը խորհրդոց:

ՊԱՏՐԱՍՏԵԱ առ հիւանդն սեղանիկ մի՛ մաքուր կտաւով ծածկեալ: և 'ի վերայ սեղանոյն մոմ վառեալ. և անօթք երկու մաքուրք: 'ի միումն իցեն բամպակեայ գնտակք եօթն որովք հիւանդին օծեալ անդամքն մաքրեսցին: 'ի միւսումն լիցէ հացն քնքուշ. կամ միջուկ հացին . որով քահանայ զմատունս իւր սրբեսցէ . պատրաստեալ և լիցէ սափորիկ մի՛ ջուր՝ որով քահանայ զձեռս իւր՝ յետ օծմանցն լուասցէ . կացցէ 'ի սպասու մին կղերիկոս . կամ սարկաւագ . որ ունիցի զխաչելութիւն առանց պատուանդանի . զջուր օրհնութեան սրսկչաւ իւ-

րով .

րով . և զմաշտոցն ։ իսկ քահանայն զշիշն
իւղոյն ունիցի 'ի կապարագոյն մաքուր
քսակի ։

Իբրև հասանէ քահանայն 'ի տեղին ,
ուր անկեալ դնի հիւանդն , ասէ ։

Ք. Խաղաղութիւն տանս այսմիկ ։

Ա. Եւ ամ՟ բնակելոց 'ի սմա ։

Յետոյ զամանիկն որ իւղոյն դնէ 'ի վե
րայ սեղանոյ . և զշապիկն . և զկապատա
գոյն ուրարն զգեցեալ տայ համբուրել հի
ւանդին զխաչելուն ։ և ջրով օրհնուե
խաչաձև սրսկէ զհիւանդն և զսենեակն .
ասելով . Ցօղեա յիս տր մշտկաւ . և որ
եղէց . լուա զիս , և քան զձիւն սպիտակ
եղէց ։

Եթէ կամիցի հիւանդն խոստովանիլ
զմեղս . քահանայն ունկն դիցէ նմա . և
մխիթարական բանիւք կանգնեսցէ զնա .
կորով հաւատով . յուսով . և սիրով ըն
կալնուլ զխորհուրդն ։ Յետոյ ասէ ։

Ք. Օգնութիւն մեր յանուն տն ։

Ա. Որ արար զերկինս . և զերկիր ։

Աղօ

## Աղօթեսցուք :

Մաղաչեմք զքեզ տէր մեր Յս Քս · մտցէ զոյդ ընդ մեզ 'ի տունս յայս յաւիտենական երանութիւն · մեծային յաջողութիւն · զուարթագին խնդութիւն · սէր պտղալից · և անանց առողջութիւն : Հալածեսցին դևքն 'ի տեղւոջէս յայսմանէ : առաջիկայ գտանիցին հրեշտակք խաղաղութեան · և 'ի տանէ աստի ամ չար հակառակութիւն 'ի բաց կացցէ :

Մեծացո տր 'ի վերայ մեր զանուն քո տր · և օրհ ✠ նեա զգնացս մեր · տր արա զմուտս խոնարհութեան մերոյ : դու որ գթած ես և ընդ Հօր և Հոգւոյդ սբյ կենդանի ես 'ի յաւիտեանս յաւիտենից : Ամէն :

Աղօթեսցուք և խնդրեսցուք 'ի տնէ մեր մէ Յսէ Քսէ զի օրհնելով ✠ օրհնեսցէ զյարկս զայս · և զամենայն զբնակեալսն 'ի սմա · և տայցէ նց զհրեշտակ բարի պահապան · և ընկալցէ զնս 'ի ծառայութիւն իւր նոյին 'ի սքանչելիս օրինաց իւրոց : 'ի բաց արասցէ 'ի նոցանէ զամենայն զզօրութիւն հակառակ · աղատեսցէ զնս յամենայն երկիւղէ · և յամենայն

իռովուէ · և արժանի արասցէ առողջ պահել զն̃ս · Որ ընդ Հօր և ընդ Հոգւոյն ս̃բյ կենդանի է՛ ; և թագաւորէ 'ի յաւիտեանս յաւիտենից · Ամէն :

Աղօթեսցուք :

Յար լուր մեզ տ̃ր ս̃ր Հայր ամենակարող · յաւիտենական ա̃ծ · և արժանի արա առաքել յերկնից զհրեշտակ քո ս̃ր · որ այց արասցէ ա̃մ բնակելոց 'ի տանս յայսմիկ · և պահեսցէ և միսիթարեսցէ : և զօրացուսցէ զն̃ս · 'ի Քն̃ Յն̃ տ̃ր մեր · որ է՛ օրհնեալ · Ամէն :

Ընթերցուած :

Ս̃բյ Աւետարանէն՝ որ ը̃ս Մարկոսի :

ՏՐն մեր Յս̃ Քս̃ ասէ աշակերտաց իւրոց · յոր տուն մտանիցէք · անդէն օթեվանս կալջիք · մինչև ելանիցէք անտի · և որք ոչ ընկալցին զձեզ · և ոչ լուիցեն ձեզ · յորժամ ելանիցէք անտի · թօթափեսջիք զփոշի ոտից 'ի վկայութի ն̃ց : Եւ ելեալ քարոզէին · զի ա-

ապաշ

պաշխարեսցեն. և դևս բազում հանէլին.
և օծանէլին իւղով զբազում հիւանդս.
և բժշկէլին զնո՟:

ա. Փառք քեզ տէ՟ր ած՟ մեր:

Այսոքիկ աղօթք թողցին ը՟ մասին. կամ ը՟ բոլորին, ըստորում ժամանակին ստիպեսցէ:

Յետոյ սարկաւագն ասէ: խոստովանիմ առաջի այ՟. և քահանային ասէ:

Ողորմեսցի քեզ ամենակարողն ած՟. թողութի՟ շնորհեսցէ ամ՟ մեղաց քոց. և տացէ քեզ զկեանսն յաւիտենականսն:

ա. Ամէն:

բ. Ջնջումն եղծողուն մեղաց մերոց շնորհեսցէ մեզ ամենակարող և ողորմած ած՟. ամէն:

Եւ դառնայ առ առաջակայ ժողովուրդն և յորդորէ զնո՟ աղօթել վասն հիւանդին. մինչ ինքն օծանէ զնա իւղովն օրհնուեն:

Յետոյ 'ի վե՟ հիւանդին ասէ:

Յանուն Հօր ✠ և Որդւոյ ✠ և Հոգւոյն ✠ սբ՟յ. շիջցի 'ի քեզ ամենայն զօրութի՟ բանսարկուին ձեռնադրու՟ ձեռաց իմոց. և բարեխօսու՟ ամենայն սբ՟ց հրեշտակաց և հրեշտակապետաց. նահապետաց. մարգարէից. Առաքելոց. Մարտիրոսաց. խոստովանողաց. կու

սանաց. և ամենայն մրց: Ամէն:
Յետոյ լուանայ զբուռն 'ի մր խուղն. և օծանէ զհիւանդն 'ի զգայարանս նր. որպէս իւր հետևի ըստ կարգի ասելով:

Առ աչս:

Այս սբ օծմամբ. և ամենագութ ողորմութբ իւրով. թողցէ քեզ տր՝ զոր տեսողութբ մեղար: Ամէն:
Եւ սարկաւագն. կամ ինքնին իսկ քահանայն բամպակով սրբէ զօծեալ տեղին. և զբամպակն արկանէ 'ի մաքուր ինչ աման. և զնոյն առնէ առ այլ ամենայն օծմունս. և յորժամ կտրեցաւ խորհուրդն. զբամպակն. և զմիջուկ հացին տանելին յեկեղեցին և այրեն հրով. և զմոխիրն արկանեն յաւազանն:

Առ ականջս:

Այս սբ օծմամբ և ամենագութ ողորմութբ իւրով. թողցէ քեզ տր զոր ինչ լսողութբ մեղար. Ամէն:

### Առ ռնգունս:

Այս ս̃բ օծմամբ. և ամենագութ ողոր մութ̃բ իւրով. թողցէ քեզ Տ̃ր. զոր ինչ հոտոտելեօք մեղար: Ամ̃էն:

### Առ բերանն՝ շրթամբք խփելեօք:

Այս ս̃բ օծմամբ. և ամենագութ ողորմութ̃բ իւրով. թողցէ քեզ Տ̃ր. զոր ինչ ճաշակմամբ և խօսողութ̃բ մեղար: Ամ̃էն:

### Առ ձեռս:

Այս ս̃բ օծմամբս. և ամենագութ ողոր մութ̃ իւրով. թողցէ քեզ Տ̃ր՝ զոր ինչ շօշափմամբ մեղար: Ամ̃էն:
Եւ եթէ հիւանդն քահանայ իցէ. ձեռքն օծանին արտաքուստ. իսկ այլոց օծանին ներքուստ:

### Առ ոտս:

Այս ս̃բ օծմամբ. և ամենագութ ողոր մութ̃բ իւրով. թողցէ քեզ Տ̃ր՝ զոր ինչ գնացիւք մեղար: Ամ̃էն:

Եթէ

Եթէ հիւանդն կին իցէ. օծումն ոտից ոչ վայելէ առնել:

Ա. երիկչաձայնս.

Այս սբ. օծմամբ և ամենազօրութ ողորմութե իւրով. թողցէ քեզ Տր՝ զոր ինչ երիկամանց հեշտութե մեղար: Ամէն:
Երիկամանց օծումն պարտ չէ՝ առնել 'ի վերայ կանանց. կամ 'ի վերայ մարդոյ՝ որ վասն ծանրագոյն հիւանդութե շարժիլ ոչ կարէ. առանց վտանգի ինչ մեռանելոյ:

Յետ այսորիկ ասէ Քահանայն:

ք. Տր ողորմեաց. Քս ողորմեաց:
Տր ողորմեաց. Հայր մեր....
Եւ մի՛ տանիր զմեզ 'ի փորձութի:
ա. Այլ փրկեա զմեզ 'ի չարէ:
ք. Առողջացո զծառայս քո.
ա. Ած իմ զյուսացեալս 'ի քեզ.
ք. Առաքեա նմա Տր զօգնութի 'ի բարձանց:
ա. Եւ 'ի սիօնէ ընկալ զնա:
ք. Լեր նմա Տր աշտարակ զօրութե.
ա. Յերեսաց թշնամւոյն.

ք. Մի

բ. Մի՛ մեղիցէ նմա թշնամին.
ա. Եւ որդի անօրէնութեան մի՛ մնասեսցէ նմա.
բ. Տէ՛ր լուր աղօթից իմոց.
ա. Եւ աղաղակ իմ առ քեզ եկեսցէ.
բ. Խաղաղութիւն ամենեցուն.
ա. Եւ ը̅ հոգւոյդ քում.

Աղօթեսցուք:

Տէ՛ր Ած մեր՝ որ 'ի ձեռն սր̅յ Առաքելոյդ Յակոբու ասացեր. Հիւանդանայցէ ոք 'ի ձէնջ. կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն. և արասցեն 'ի վր̅ նր̅ աղօթս. օծցեն իւղով յԱնուն տ̅ն. և աղօթքն հաւատով փրկեսցեն զախտացեալն: և յարուսցէ զնա տէր. և եթէ մեղս իցէ գործեալ՝ թողցի նմա: Աղաչեմք զքեզ փրկիչ մեր շնորհօք Հոգւոյն սր̅յ. փարատեա զցաւս հիւանդիս այսորիկ. և զախտս նր̅ բժշկեա. և թող զմեղս նր̅. և զա̅մ ցաւս հոգւոյ և մարմնոյ 'ի բաց արա 'ի նմանէ. և ողորմութ̅բ քով շնորհեա նմա զարտաքին և զներքին կատարեալ առողջութիւն. զի շնորհիւ գթութեան քոյ զօրացեալ կարիցէ դառնալ 'ի պաշտօն իւր յառաջինն. Որ ընդ Հօր:

Հօր և Է Հոգւոյն Սբյ կենդանին ես. և թագաւորես 'ի յաւիտեանս յաւիտենից:

Ամէն:

Աղօթեսցուք:

Նայեաց տէր 'ի ծառայ քոյ պաշտարեալ ցաւօք մարմնոյ իւրոյ. և սփոփեա զհոգի. զոր արարեր. զի տկարութբ իւրով խրատեալ՝ խոստովան լիցի. թէ 'ի քէն է՛ տէր փրկութիւն իւր. Տր մերով Յսիւ: Քսիւ: Ամէն:

Աղօթեսցուք:

Տէ Տր Հայր ամենակարող. յաւիտենական ած՝ որ յախտացեալ մարմինս ծաւալելով զօրհնութիւն շնորհաց քոց. բազմապատիկ դեղութբ պահես զարարածս քո: Լուր մարդասէր աղօթից այնոցիկ՝ որք կարդան զանուն քո Տր. և զծառայդ քո յախտից բժշկեալ. և 'ի ցաւոց զօրացեալ աջովդ քո կանգնեա. զօրութբ քո հաստատեա. և կարողութբ քով պահպանեա. և ամ յաջողութբ դարձո զնա յեկեղեցիդ քոյ տեառամբ մերով Յսիւ. Քսիւ. Ամէն:

Օրհնութիւն Այ միշտ եղիցի ընդ մեզ:

Ամէն:

Մա

Մատեր յառաջ ո՜վ Քահանայ.
Նորոյս կրօնի. սուրբ Պաշտօնեայ.
խորին խորհուրդ բանից արա.
զոր ինչ ասեմ. խիստ ականջ կա:
Նախ զհոգիդ յախտից մաքրեա.
տաճար յատակ Հոգւոյն կազմեա:
սրատես ակամբ 'ի հիւանդն հայեա:
զխղճըն նորին՝ ներքին իմա:
Իմացուածովն այնու ապա.
ըղզօրաւոր դեղըս հարդեա:
Թէ տդէտ ես՝ գիրըս կարդա.
զոր տեսանես յառաջակայ:
Ջի անհմտից շաւիղ ցոյց տայ.
և անկրթից դուռըն բանայ:
երկբայութի ոչինչ մընայ.
'ի յայնմ անձին. որ զայս կարդայ:
Իսկ թէ ոչինչ հոգ 'ի քեզ կայ:
կրթիլ պէս պէս խրատու սորա.
ես քեզ ասեմ. թէ հըրաժարեա.
ի պաշտօնէդ՝ որ քեզ մընայ:

Այլ

Այլ թէ յանդուգն յառաջ վազես.
և զպայցանէ ոչ մրտաւես.
Նախ զհոգիդ դատապարտես.
ընդ քեզ և զնա 'ի մահ մատնես:
Զի ա̄ սրում բուժել կարծես.
պէս պէս դեղովք զնա մաքրես.
զի՞արդ կարես. զի տըգէտ ես.
և զդեղոցըն անունն չգիտես:
Արդ՝ եկ յառաջ բուռն հար և տես:
ըզզանազան դեղոց ատմէնս.
զի պարզաբար տաս դտանես.
տարակուսից քոյ մեծ հանդէս:
Որովք զմխտալըդ լուսաւորես.
զհոգիդ եղբօրդ ապաքինես.
առ ինչ վազման մարդն արարաւ:
առ այն շաւիղն հասուցանես:
Վասն այնորիկ ջան եղև մեզ.
դըրդուկըս զայս ընծայել քեզ:
որով ըզպարտադ լըցուսցես.
և տօն մերոյ՝ լիցի գովեստ:
Ամէն:

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ